

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

ԶՈՒԳԱՅԵՌ ՍԸ ԱՐՄԵՏ ԱԼՔԱՆԻ ԵՒ ՎԱՐՉԱՊԵՏ ՌԵԶԷՓ ԹԱՅԻՊ ԷՐՏՈՂԱՆԻ ՄԻՋԵՒ

ՏՕՔՔ.Ա.ԳԱԶԱՆՃԵԱՆ

Մեր այսօրուան շոշափած միջոց «Մասիս»-ի ներկայ եւ յաջորդ համարներով լուսարձակի տակ պիտի առնէ թուրք երկու ակադեմիկոսները՝ առաջինը՝ միջազգային քաղաքականության վրայ հանրաճանաչ արդարակորով մտաւորական Ա.Կ.Մ. Ալիբաբա, յաջորդը՝ թուրքիոյ Վարչապետ Ռեզեֆ Թայիփ Էրտողանը: Իրարմէ վեց օրուան տարբերութեամբ, Ալիբաբա՝ իր թրքալու «Թարաֆ» թերթի 11 Մարտ 2010 թուակիր համարին մէջ գրած մէկ յօդուածով, իսկ Վարչապետ Էրտողան՝ 17 Մարտ 2010-ին, Լոնտոնի մէջ ունեցած իր մէկ սպառնական յայտարարութեամբ, գրաւեցին մեր հետաքրքրութիւնը, առիթ ընծայելով մեզի կատարելու կարգ մը խորհրդածուխներ:

Մասնագիտութեամբ տնտեսագետ, Արուեստի եւ Ընկերային գիտութիւններու Պոլսոյ Սապուր-ճի համալսարանի տնօրէն, գիտական քաղաքական գիտնական հեղինակ, ծանօթ յօդուածագիր, բազում միջազգային պարգեւատրութիւններու արժանացած եւ աշխարհին քաղաքական անձնաւորութիւն մըն է Ա.Կ.Մ. Ալիբաբա:

Ան, աշխարհով մէկ միլիոնաւոր հեռուստադիտողներու մասն, ինք եւս հետեւած է ԱՄՆի Բոնկրէտի Արտաքին Յարաբերութիւններու Յանձնախումբի կողմէ 22ի դէմ 23 փուլով հայոց դէմ թուրքիոյ գործադրած ճեղասպանութիւնը մանչցող թիւ 252 բանաձեւի փութարկութեան գործընթացին, որ պարտութեան մատնած էր թուրքիան: Թուրքիան ինչպէս միշտ, կրկին նուաստացած էր (humiliated) քաղաքացիներու հեռուստադիտողներու եւ աշխարհի առջեւ: Իր երկրի պարտութեամբ, նոյնպէս, նուաստացած ըլլալու զգացումը պարծ է Ալիբաբա, ինչ որ խորը ընդվզում յառաջացուցած է իր մէջ:

Ա.Կ.Մ. Ալիբաբա վկայակոչելով պատկերասփիւռի վրայ, իր ընդունումով «ազգային ֆուրկանի խաղի» մը նմանութիւնը ունեցող փութարկութեան, ԱՄՆի ներկայացուցչական Տան Արտաքին յարաբերութիւններու ժողովին հայոց դէմ իրագործուած ճեղասպանութեան մանչումը որդեգրող բանաձեւը, համաձայն իր գնահատութեան, նաեւ կը խորհրդանշէր թուրքիոյ նուաստացումը, քաղաքացիական պարտութեան վրայ:

Պրն. Ա.Կ.Մ. Ալիբաբա մի անգամ ընդմիջու գտնելով թէ՛ Միութեան

Մար.ք էջ 5

ԵՐԱԽՈՐՀՈՒՐԴԻ ԿՈՄԻՏԵՆ ՄԱՐՏԻ 1-Ի ԴԵՊԵՐՈՒ ԶՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՔՆՆՈՒԹԵԱՆ ԿՈՉ Կ'ԸՆԷ

Եւրոպայի խորհուրդի խորհուրդներու եւ անմարդկային կամ արժանապատուութիւնը նուաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եւրոպական կոմիտէն (ԽԿԿ) Հայաստանի իշխանութիւններուն կողմէ ըրած է 2008 թուականի Մարտի 1-ի իրադարձութիւններու հրապարակային քննութիւն կատարել:

Կոմիտէն Մարտ 19-ին հրապարակած է 2008-ի Մարտին Հայաստան կատարած իր յատուկ այցի վերաբերեալ գեկոյցը՝ Հայաստանի կառավարութեան պատասխանի հետ միասին:

«Այցի հիմնական նպատակն էր ուսումնասիրել 2008 թուականի Փետրուարի 19-ի նախագահական ընտրութիւններին յաջորդած իրադարձութիւններու հետ կապուած ազատագրուած անձերու նկատմամբ վերաբերմունքը», - ըստած է հաղորդագրութեան մէջ: - «Պատուիրակութիւնը առանձին հարցազրոյցներ ունեցած է ընտրութիւններուն յաջորդող իրադարձութիւններուն առնչուող մեղադրանքներով կախման տակ գտնուող անձերու հիմնական մասի հետ:

Մար.ք էջ 5

ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿՈՉԸ ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՉԱԽԱԿՈՂՄԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Հայաստանի վարչութիւնը նամակ մը յղած է Պուլկարիոյ Խորհրդարանի Սոցիալ-դեմոկրատական եւ Սոցիալիստական կուսակցութիւններուն: Նամակին մէջ ըստած է.-

«Յարգելի ընկերներ, առաջիկայում Բուլղարիայի խորհրդարանը պատրաստուած է քննարկել Հայոց Յեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման օրինագիծը: Բուլղարիան եւ հերոսական բուլղար ժողովուրդը շատ լաւ պէտք է հասկանայ մեզ՝ հայերիս, քանի որ Բուլղարիան նոյնպէս հարիւրաւոր տարիներ տառապել է Օսմանեան Թուրքիայի

լծի ներքոյ, կրել անասելի գրկանքներ: Բուլղար եւ հայ ժողովուրդները, սակայն, բարտակից են այն առումով, որ երբեք եւ երբեք չեն ընկճուել, շարունակել են պայքարել՝ թուրքական լծից ազատագրուելու համար: Հայրուկային շարժումը, որ ծայր առաւ Բուլղարիայում, աստիճանաբար տեղափոխուեց նաեւ Հայկական լեռնաշխարհ, որտեղ նոյնպէս բարձրացաւ հայ ժողովուրդի ազատագրութեան դրօշը:

«Յարգելի ընկերներ, Թուրքիան, ցանկանալով իրականացնել իր պանթուրքիստական ծրագրե-

Մար.ք էջ 5

ԱՐԱ ՊՈՅԱԾԵԱՆ ՊԱՐԳԵԻՍՏՐՈՒԾ Է ԱՐՑԱԽԻ «ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ» ՇՔԱՆՇԱՆՈՎ

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամը Մարտ 22-ին իր մէջ հաղորդագրութեամբ կը տեղեկացնէ որ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեանի Մարտի 20-ի հրամանագրով, Հիմնադրամի Թորոնթոյի յանձնախումբի անդամ, Հոգաբարձուներու Խորհուրդին ներս Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան ներկայացուցիչ Արա Պոյաճեան, Արցախի մէջ իրականացող զարգացման ծրագիրներուն իր գործուն մասնակցութեան համար, արժանացած է Արցախի «Երախտագիտութեան» շքանշանի:

Արա Պոյաճեան 1993 թուականին ստղին եղած է «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Թորոնթոյի մասնաճիւղի հիմնադիր անդամ, 17 տարի շարունակ վարելով առեւտրային եւ գանձապահի պաշտօնները: 2007-ին ան դարձած է նաեւ Հիմնադրամի հոգաբարձուներու խորհուրդի անդամ:

Տէր եւ Տիկին Արա եւ Քա-



լապրինա Պոյաճեաններ նաեւ «Հայաստան» հիմնադրամի նուիրատու անդամներ են եւ կատարած են 100,000 ամերիկեան տոլար գերազանցող նուիրատուութիւն:

Իր բարեգործական երկարամեայ գործունէութեան համար 1993-ին Արա Պոյաճեան արժանացած էր «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարերար»-ի կոչումին:

ԷՐՏՈՂԱՆԻ ՀԱՅԱՏԵԱՑ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ Կ'ԱՐԺԱՆԱՆԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԻ



Թուրքիոյ վարչապետ Ռեզեֆ Էրտողանի Լոնտոնի մէջ կատարած հայաստեաց յայտարարութիւնը՝ 100 հազար ապօրէն հայերու երկրէն վտարելու մասին, կը շարունակէ մեծ աղմուկ յառաջացնել Թուրքիային ներս եւ դուրս:

Եւրոպայի Միութիւն-Թուրքիա խորհրդարանական յանձնաժողովի նախագահ էլլին Ֆլորտր Թուրքիոյ վարչապետի խօսքերը նկատած է «մտահոգիչ եւ անընդունելի»: ԵՄ ներկայացուցիչը, շեշտելէ ետք, որ Թուրքիոյ մէջ ապօրինի աշխատող հայերը գուրկ են ամէն տեսակի իրաւունքներէ եւ կ'ենթարկուին ոստիկանութեան ճնշումներուն, քննադատած է Էրտողանի սպառնալիքները, գանձք որակելով որպէս «Հայաստան-Թուրքիա շարաբերութիւններու կարգաւորման գործընթացի ընթացքին այդ մարդիկը որպէս ճնշման լծակ գործածելու» փորձ:

Էրտողանի սպառնալիքները խիստ քննադատութեան ենթարկուած է նաեւ Ֆրանսայի ընդդիմադիր Սոցիալիստական կուսակցութիւնը: Յայտարարութեամբ մը հանդէս գալով, Սոցիալիստական կուսակցութեան ներկայացուցիչ Ժան-Քրիստոֆ Քամբադէլլի ըսած է.-«Մենք խստօրէն կը քննադատենք Թուրքիոյ վարչապետի յայտարարութիւնը: Եթէ իրականութիւն դառնայ այդ սպառնալիքը, ծանր հարուած կը հասցուի մարդու իրաւունքներուն եւ Եւրամիութեան մարդկային արժէքներուն: Եթէ Թուրքիա Օսմանեան կայսրութեան ժամանակաշրջանին իրականացուցած յանցագործութիւններու համար պատասխանատու չէ, ապա բարոյական պարտք ունի ճանչնալու Հայոց Յեղասպանութիւնը»:

Թրքահայ լրագրողներ, իմբազիրներ ու մեկնաբաններ եւս շատ ցաւալի նկատած են հազարաւոր հայաստանցիներ վտարելու մասին Էրտողանի յայտարարութիւնը ու յայտնած՝ որ վարչապետի ներ-

Մար.ք էջ 5

ՐԱՅԱՍԱՆ

ՄՏԵՓԱՆ ՍԱՖԱՐԵԱՆ. «ՐԱՅԱՍԱՆԻ ԻՇԽՈՂ ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ՆԵՐՍՈՒՄ ՍՏԱՏՈՒՄ-ՔՎՈՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՁԳՏՈՒՄ Ե Ի ՅԱՅՏ ԵԿԵԼ»

Հայաստանի իշխող կոալիցիայի ներսում ստատուս-քվոն փոփոխելու ձգտում է ի յայտ եկել, NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում լայտարարել է «Ժառանգութիւն» կուսակցութեան խմբակցութեան ղեկավար Ստեփան Սաֆարեանը:



«Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Ստեփան Սաֆարեան

Նրա խօսքով, ստատուս-քվոն որոշել է խախտել կոալիցիայի քոչարեանամէտ թեւը, որն իր հեռու գնացող նկրտումների իրականացման համար սկզբում որոշել է հասնել վարչապետի փոփոխութեան եւ այդ պաշտօնում նշանակել իր թեկնածուին: «Այդ նպատակով կոալիցիայի քոչարեանամէտ թեւը վարչապետի եւ կառավարութեան դէմ օգտագործում է ֆինանսատնտեսական ճգնաժամի բոլոր բացասական հետեւանքները»,- լայտարարել է Սաֆարեանը:

«Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Ստեփան Սաֆարեանը նկատել է. «Ես համաձայն չեմ վարդան Օսկանեանի փաստարկների հետ: Վարդան Օսկանեանը եւ Ռոբերտ Քոչարեանը պէտք է մէկընդմիջում չիշեն, որ Հայաստանն այսօր անդունդում է յայտնուել 10 տարի նրանց կողմից իրականացուած քաղաքականութեան պատճառով: Նրանք են Մադրիդեան սկզբունքների հեղինակները, նրանք են առաջարկել երեք հիմնական սկզբունքները, որոնք աւելի ուշ միացուեցին հայ-թուրքական արձանագրութիւններին, իսկ ներկայիս իշխանութիւնները միայն շարունակում են նրանց կողմից սկսուած քաղաքականութիւնը»:

Մեկնաբանելով նախկին արտգործնախարար Վարդան Օսկանեանի վերջին հարցազրույցը, որում նա Հայաստանի ներկայիս իրավիճակը համեմատում է 1995-1996 թթ. իրավիճակի հետ, երբ Լիսաբոնեան գաղաթնաժողովից յետոյ վարչակազմը՝ Լեւոն Տէր-Պետրոսեանի գլխավորութեամբ, հրաժարական տուեց, Ստեփան Սաֆարեանը

ՐԱՅԱՍԱՆԸ ԻՆՏԵՐՆԵՏ ՐԱՍԱՆԵԼԻՈՒԹԵԱՄ ՎԵՐՋԻՆՆ Ե ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

Ինտերնէտ հասանելիութեան մակարդակով Հայաստանը շարունակում է մնալ ամենաթոյլ զարգացած երկիրը տարածաշրջանում: 2008թ. ցուցանիշներով՝ Հայաստանում ինտերնէտից օգտուողների թիւը կազմել է 19.1 հազ.: Նախորդ տարուայ համեմատ՝ օգտատէրերի թիւն աւելացել էր ընդամէնը 3,2%-ով: Հաշուետու տարում Հայաստանը դասուել է այն երկրների շարքը, որտեղ ինտերնէտից օգտուողների թիւը 100 հազ. բնակչութեան հաշուով կազմել է 6-10 մարդ: Այդ երկրներից են, օրինակ Նիգերիան, Սուդանը, Ուզբեկստանը, Տաշիկստանը: Մեր հարեւաններից Վրաստանը դասուել է այն երկրների շարքը, որտեղ 100 հազ. բնակչի հաշուով ինտերնէտից օգտուում է 16-20 մարդ, իսկ Ադրբեյջանում՝ 26-30 մարդ: Այս մասին տեղեկանում են BBC-ի կազմած ինտերնէտ հասանելիութեան քարտէզից: Թուրքիայում եւ իրանում 100 հազ. բնակչի հաշուով ինտերնէտից օգտուողների թիւը գերազանցում է 31-ը: Ուշագրաւ է, որ, օրինակ, Վրաստանում, նախորդ տարուայ համեմատ, ինտերնէտ օգտագործողների թիւն աւելացել է 2,85 անգամ՝ գերազանցելով մէկ միլիոնը: Ադրբեյջանում մէկ տարուայ ընթացքում ինտերնէտ օգտագործողների թիւն աւելացել է 57,3%-ով՝ կազմելով շուրջ 2,45 մլն: Թուրքիայում եւ իրանում ինտերնէտ օգտագործողների թիւը մէկ տարուայ ընթացքում աւելացել է համապատասխանաբար 15,6%-ով եւ 78%-ով:

Ինտերնէտ հասանելիութեանը Հայաստանում վերջին 10 տարուայ ընթացքում, կարելի է ասել, բաւական թոյլ է զարգացել: Օրինակ՝ 1998թ. Հայաստանում ինտերնէտ օգտագործողների թիւը կազմում էր 4 հազ., Վրաստանում՝ 5 հազ., իսկ Ադրբեյջանում՝ 3 հազ.: Այսպիսին, այս երեք հանրապետութիւնները, կարելի է ասել, ունեցել են միեւնոյն թուող ինտերնէտ օգտագործողներ:

ԾԵԾԵԼ ԵՆ «ՐԱՅՈՑ ԱՇԽԱՐԻ» ԽՄԲԱԳՐԻՆ

Մարտի 20-ին ծեծի է ենթարկուել «Հայոց աշխարհ» թերթի գլխավոր խմբագիր Գագիկ Մկրտչեանը: Հայաստանի ռատիկանութեան մամուլի ծառայութիւնից NEWS.am-ին յայտնում են, որ Մարտի 20-ին, ժամը 16.30-ին, «Արմենիա» բժշկական կենտրոնից ռատիկանութեան կենտրոնականի բաժնում հաղորդում է ստացուել, որ իրենց մօտ բուժօգնութեան է դիմել 1968 թ. ծնուած Մանուէլ Կիրակոսեանը՝ յայտնելով, որ «Հայոց Աշխարհ» թերթի խմբագրութիւնում գէնքով հարուածել են գլխին: Պարզուել է, որ նոյն օրը, ժամը 15.00-ին, խմբագրութեան մուտքի մօտ, Մ. Կիրակոսեանը վիճաբանել է գլխավոր խմբագիր Գագիկ Մկրտչեանի հետ, ձեռքերով հարուածել նրան, զցել գետնին եւ ծեծի ենթարկել: Այդ պահին աշխատասենեակ է մտել Գ. Մկրտչեանի որդին՝ Վահան Մկրտչեանը, որը տեսնելով Մ. Կիրակոսեանի կողմից հօրը ծեծելու փաստը, իր մօտ եղած մահակով հարուածել է Մ. Կիրակոսեանի գլխին եւ պատճառել վնասուածք: Մ. Կիրակոսեանի եւ Գ. Մկրտչեանի նկատմամբ նշանակուել է դատաբժշկական փորձաքննութիւն: Կատարուել է հետաքննութիւն:

ՐԻԿ ՊԱՏԳԱՄԱԻՈՐ ՔՆԱԴԱՏՈՒՄ Ե ՕՍԿԱՆԵԱՆԻՆ

Աժ ՀՀԿ-ական պատգամաւոր, սոցիալական հարցերի յանձնաժողովի նախագահ Յակոբ Յակոբեանը Մարտի 22-ին հաղորդագրութիւն է տարածել, որում անդրադառնում է ՀՀ նախկին արտգործնախարար Վարդան Օսկանեանի հարցազրույցին: Դրանում ասում է. «Ծանօթանալով պարոն Վ. Օսկանեանի Ա1+-ին տուած վերջին հարցազրույցին նկատեցի, որ հարցազրույցում արտայայտուած մտքերը հակասում են իրար եւ հակասում են նաեւ 10 տարի շարունակ պարոն Օսկանեանի՝ իբրեւ Արտաքին գործերի նախարարի ելոյթներին եւ հաւաստիացումներին: Կարծում եմ այնտեղ արտայայտուած մտքերն առաջին հերթին պէտք է մտահոգեն իրեն՝ պարոն Օսկանեանին: Մասնաւորապէս՝ Օսկանեանն ասում է, որ այն, ինչ կայ սեղանի վրայ, բացառում է որ ընդունուի: Պէտք է արձանագրենք, որ այսօր սեղանի վրայ եղած փաստաթուղթը նոր չի դրուել սեղանի վրայ: Այն մշակուել եւ ընդունելի է համարուել հենց Օսկանեանի մասնակցութեամբ բանակցութիւնների արդիւնքում եւ եթէ այնտեղ կան անընդունելի դրոյթներ, ապա դրանց համար պատասխանատու է նաեւ պարոն Օսկանեանը: Պարոն Օսկանեանը հարցազրույցի սկզբում ասում է, որ առաջարկելու բան չունի, բայց յետոյ մոռանում է դրա մասին եւ առիթը բաց չի թողնում եւ առաջարկում է իշխանութիւններին դադարեցնել բանակցութիւնները: Եթէ բանակցութիւնները դադարեցնելն արդիւնքներ կը տալին, ապա ինչու ինչը 10 տարի շարունակ մասնակցում էր բանակցութիւններին եւ մասնակցում էր այդ՝ իր համար անընդունելի մարտիական փաստաթղթի մշակմանը:

ՄՏԱԻՈՐԱՎԿԱՆՆԵՐԸ ՅՈՐԴՈՐՈՒՄ ԵՆ ՉՔԱՆԴԵԼ «ՄՈՍԿՈՒԱ» ԿԻՆՈԹԱՏՐՈՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԴԱՐՆԻԾԻ ՇԵՆՔԸ

Աւելի քան վեց տարեակ մտաւորականներ նամակով դիմել են Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսեանին եւ Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսին՝ յայտնելով, որ Մայր Աթոռ էւ ՀՀ կառավարութիւնը կը հրաժարուեն «Մոսկուա» կինոթատրոնի ամառային դահլիճը քանդելու եւ դրա տեղում քանդուած Սուրբ Պօղոս-Պետրոս եկեղեցու տեսքին համապատասխան նոր եկեղեցի կառուցելու նախաձեռնութիւնից՝ «ի նշան խորաթափանցութեան եւ հայ ժողովրդի մշակութային արժէքների նկատմամբ յարգանքի»:



«Մոսկուա» կինոթատրոնի ամառային դահլիճը

Հայաստանի կառավարութիւնը Փետրուարի 25-ին որոշում է ընդունել՝ երեւանի «Մոսկուա» կինոթատրոնի ամառային դահլիճի շէնքի զբաղեցրած հողատարածքն անհատույց՝ սեփականութեան իրաւունքով օտարել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նախկինում խորհրդային իշխանութեան կողմից քանդուած Սուրբ Պօղոս-Պետրոս եկեղեցու տեսքին համապատասխան նոր եկեղեցի կառուցելու համար: Պնդելով, որ ճարտարապետներ Սպարտակ Կնոնեցեանի եւ Թելման Գեորգեանի հեղինակած շինութիւնը երեւանի «սակաւաթիւ կառուցներից է, որն ունի բարձրարժէք ճարտարապետական լուծումներ ու լաւագոյնս ներգծուած է մեր քաղաքին», նամակի հեղինակները յայտն են յայտնում, որ «Մայր Աթոռ էւ ՀՀ կառավարութիւնը կը հրաժարուեն այս նախաձեռնութիւնից՝ ի նշան խորաթափանցութեան եւ հայ ժողովրդի մշակութային արժէքների նկատմամբ յարգանքի»:

«Պետութեան կողմից պահպանուող յուշարձանների ցանկից կամայական հանել նման նշանակութեամբ շինութիւնը, որը մեծ հետք է թողել ժամանակակից հայ ճարտարապետութեան մէջ, չի կարելի», - ասաց Մինասեանը: - «Մենք վրդովուած ենք, որ պետութիւնը կարողանում է հետազոտութեամբ հանել պետութեան կողմից պահպանուող յուշարձանների ցանկից նման շինութիւնը»:

Ճարտարապետ Լեւոն Վարդանեանի համոզմամբ «Մոսկուա» կինոթատրոնի ամառային դահլիճը «հետթամանեանական շրջանում ժամանակակից ճարտարապետութեան ասպարէզում ամենափայլուն օրինակ է»:

«Որովհետեւ դա միակ կառուցն էր, որ հասաւ համաշխարհային բոլոր ստանդարտներին», - փաստարկեց նա՝ շարունակելով. - «Եթէ մենք՝ երեւանցիներս, մեզ համարում ենք քաղաքացիներ, մենք բոլորով պէտք է ոտքի կանգնենք եւ թոյլ չտանք, որ այս գործընթացը շարունակուի»:

Այս հարցի շուրջ տարբեր կարծիք է յայտնել Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան «Սարգիս Տխրունի» ռասնողական երիտասարդական միութիւնը, ասելով, որ այն ժամանակ, երբ Հայաստանում օր-օրի աւելանում են ազգակործան տարատեսակ աղանդները, երբ վերանում են բազմաթիւ բարոյական արժէքներ, մեղմ ասած տեղին չէ դէմ խօսել եկեղեցու կառուցմանը: Աւելին, ամենեւին էլ վատ չէր լինի, եթէ բազմաթիւ այլ այլ «էլիտար» կառույցների փոխարէն երեւանի կենտրոնում վեր խոյացած լինէին հոյակերտ եկեղեցիներ:

ԼՈՒՐԵՐ

ՍԻՐԻՐԱՅԻ ՆԱԽԱԳԱՐԸ ԻՐ ՕԳՆՈՒԹԻՒՆՆ Է ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ՅԱՅ - ԹՈՒՐՔԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱԻՈՐՄԱՆ



Սարգսեան եւ Ասադ իրենց տիկիններով՝ Դամասկոսի մէջ հանդիպման ընթացքին

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի Սիրիա կատարած այցի ընթացքում այդ երկրի առաջնորդ Բաշար Ալ-Ասադը իր օգնութիւնն է առաջարկել հայ - թուրքական յարաբերութիւնները կարգաւորելու հարցում՝ յանուն տարածաշրջանի կայունութեան եւ անվտանգութեան:

«Նախագահ Սերժ Սարգսեանը ներկայացրել է ինձ Կովկասում տիրող իրավիճակի շուրջ վերջին զարգացումները, ուզում եմ ընդգծել, որ հայ - թուրքական յարաբերութիւնների շուրջ նախագահ Սերժ Սարգսեանը խիզար որոշում է ընդունել եւ պէտք է յաջողի այս գործում», - ըստ սիրիական «Մասնա» լրատուական գործակալութեան՝ յայտարարել է Պաշար Ալ-Ասադը եւ յաւելել. - «Սիրիան պատրաստ է իր դերը խողալ Հայաստանի եւ թուրքիայի միջեւ յարաբերութիւնների կարգաւորման գործում: Ես կարծում եմ՝ Հայաստանի ղեկավարները մեզ լիովին վստահում են, ուստի մենք անյապաղ քայլեր կը ձեռնարկենք այդ ուղղութեամբ, առաւել եւս, որ Սերժ Սարգսեանը քաջալերում է մեզ այդ գործում»:

Սերժ Սարգսեանը, իր հերթին, յայտարարել է, որ Հայաստանը անստորում է «խաղաղ լուծումները եւ վէճի կարգաւորման ուղղուած երկխօսութիւնը՝ առանց կասկածի տակ առնելու եւ մոռանալու սեփական պատմութիւնը»:

Մարտ 23-ին Սերժ Սարգսեանը հանդիպում է ունեցել տեղի հայ համայնքի եւ եկեղեցու առաջնորդների հետ եւ յետոյ մեկնել Հալէպ, ապա՝ Դեր-Չոր:

ՆՈՐ ԲԱՅԱՅԱՅՏՈՒՄՆԵՐ ՅՐԱՆԴ ԴԻՆՔԻ ՄՊԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Թուրք իրաւապահները պնդում են, որ 2007 թուականի Յունուարի վերջին «Ակոս»-ի խմբագրապետ Հրանդ Դինքի սպանութիւնը երկրի Ռազմածովային ուժերի սպայակազմի կողմից կազմակերպուած դաւադրութեան մի մասն էր:

Անցած ուրբաթ Ստամբուլի 12-րդ քրէական դատարանում մեկնարկել է երեք պաշտօնաթող ծովակալների եւ Ռազմածովային ուժերի 30 սպաների դէմ յարուցուած քրէական գործի քննութիւնը:

Դատական նիստի ընթացքում մեղադրող կողմը մի շարք իրողէն սպացոյցներ է ներկայացրել: Դրանց թոււ է եղել 2009-ի գարնանը թուրքական բանակի պաշտօնաթող սպայ Լեւենտ Բեքթաշի տանը յայտնաբերուած դաւադրութեան ծրագրի տեքստը պարունակող համակարգչային կրիչը: Դատախազութեան պնդմամբ՝ գործողութիւնների «Քաֆէս» (Թարգմանաբար «Վանդակ») անուանումը կրող այս պլանի գլխավոր նպատակը ռազմական յեղաշրջման համար բաւարար նախադրեալների ստեղծումն էր:

Դատախազութեան ներկայացուցիչները պնդում են, որ այս գաղտնի ծրագրի առաջին փուլում կազմուել է թուրքիայի կրօնական փոքրամասնութիւնները ներկայացնող ամենայայտնի գործիչների ցանկը: Երկրորդ փուլում այս ցանկում տեղ գտած անձանց պէտք է սպառնալիքներով նամակներ ուղարկուէին:

Իրաւապահներին յաջողուել է ծրագրի այս հատուածի իրագործման առնուազն մէկ սպացոյց յայտնաբերել:

ման առնուազն մէկ սպացոյց յայտնաբերել: 2007-ին Ստամբուլի փոստային բաժանմունքներից մէկից սպառնալիքներ պարունակող երկու էջանոց նամակ է ուղարկուել քաղաքում գործող մի շարք հայկական դպրոցների ղեկավարներին: «2007-ի Մայիսի 3-ին ուղարկուած այս նամակները կրել են «Վերջին նախագողւշացում» վերնագիրը», - նշուած է մեղադրական եզրակացութիւնում:

Գործողութիւնների «Քաֆէս» ծրագրի յաջորդ փուլում բանակի հետ սերտ կապեր ունեցող լրագրողներին յանձնարարուել էր լայնօրէն լուսաբանել կրօնական փոքրամասնութիւնների հասցէին ուղղուած սպառնալիքների թեման՝ պնդելով, որ էրդողանի կառավարութիւնն ի վիճակի չէ սպահովուել բնակչութեան այս խմբերի անվտանգութիւնը: Ծրագրի աւարտական փուլում էլ նախատեսուած էր մի շարք սպանութիւններ իրագործել, որոնց մեղքը բարդուելու էր իշխող «Արդարութիւն եւ զարգացում» կուսակցութեան վրայ:

Իրաւապահները պնդում են, որ «Ակոս»-ի խմբագրապետ Հրանդ Դինքի, Տրապիզոնում բնակուող կաթոլիկ հոգեւորական Անդրէաս Սանտորոյի, Մալաթիայում բնակուող երեք քրիստոնեաների սպանութիւնները եւս այս պլանի մի մասն էին:

«Ծրագրի հեղինակները նախատեսում էին, որ այս յարձակումները հանրութեան շրջանում քառսի կը հանգեցնեն, սակայն նրանց հաշուարկները չարագրացան», - գրում է «Զաման» օրաթերթը:

ՄԵԾԱՐԱՆՔ՝ ՈՒՐՈՒԿՈՒԱՅԻ ՄՕՏ ՅԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՈՒՅ ՅԻՊԱՏՈՍԻՆ



Ուրուկուալի ՀՄՄ-ի վարչութեան կազմակերպութեամբ, անցեալ շաբաթ «FIGARI» հիւրանոցին մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն Ուրուկուալի մօտ Հայաստանի առաջին պատուաւոր հիւպատոս Պր. Ռուբէն Հայրապետեանի ի պատիւ:

ՄԻՉԿ-ի վարիչ Մարմինը մեծ արեւելով նոր ժամանած հիւպատոսին, իրեն յանձնեց գնահատանքի յուշատախտակ: Այս առթիւ իր ունեցած ելուցի մէջ ՄԻՉԿ-ի վարիչ Մարմնի Ատենապետ Ընկ. Տոքթոր Մարսել Քէոշկերեան յաջողութիւն մաղթեց Պր. Աբահամեանին եւ ըսաւ, - «Անկախ թէ ՄԻՉԿ այսօր ընդդիմադիր է, մենք զիտենք զանազան պետական

եւ իշխանական շահերը: Իշխանութիւնները կու գան ու կ'երթան, սակայն Հայրենիքը կը մնայ»:

Ընկ. Քէոշկերեան Ուրուկուալի հայութեան ներկայացուց ՄԻՉԿ վերջին համագումարի որոշումները, յատկապէս խոր մտահոգութիւն յայտնելով հայ-թրքական յարաբերութիւններու վերջին զարգացումներուն վերաբերելով:

Իր պատասխան խօսքին մէջ ՀՀ պատուաւոր հիւպատոս Պր. Աբահամեան շնորհակալութիւն յայտնեց ջրմ ընդունելութեան ու մեծարանքի համար ու յայտնեց, որ իր երիտասարդութեան տարիներուն մեծ ուրախութեամբ մաս կազմած է ՀՄՄ-Հնչակեան Ակումբի ֆուտպոլի խումբերուն:

ՍԱՐԳՍԵԱՆ ԿՈՉ Է ԱՆՈՒՄ ԱԴԻԲԵՋԱՆԻՆ ԱՏՈՐԱԳՐԵԼ ՈՒԺԻ ՉԿԻՐԱՌՄԱՆ ՅԱՍԱՋԱՅՆԱԳԻՐ

Սերժ Սարգսեանը Euronews հեռուստատեսութիւնը տուած հարցազրոյցում կոչ է արել Ադրբեյջանին ստորագրել ուժի չկիրառման մասին համաձայնագիր:

Լրագրողի դիտարկմանը, թէ Ադրբեյջանը յստակ յայտարարել է, որ երբեք չի համաձայնի Լեռնային Ղարաբաղի անկախութեանը, Սերժ Սարգսեանը արձագանքել է. - «Ի՞նչ է առաջարկում միջազգային հանրութիւնը. ինդիքը կարգաւորել միջազգային իրաւունքի երեք սկզբունքների հիման վրայ՝ ինքնորոշման, տարածքային ամբողջականութեան եւ ուժի չկիրառման: Օգտուելով առիթից՝ ուզում եմ ձեր միջոցով դիմել Ադրբեյջանին՝ կոչ անելով ստորագրել ուժի չկիրառման մասին համաձայնագիր»:

«Դա վստահութեան մթնոլորտ կ'առաջացնէր Հայաստանում եւ Լեռնային Ղարաբաղում», - փաստարկել է Հայաստանի նախագահը՝ շարունակելով. - «Եւ այդ պայմաններում կը սկսէինք կարգաւորման շուրջ բանակցութիւնները»:

«Փետրուարին Լոնդոնում դուք ասել եք, որ Լեռնային Ղարաբաղը երբեք մաս չի կազմել անկախ Ադրբեյջանին: Միջազգային հան-

րութիւնը, կարծես թէ, այլ կարծիք ունի», - ասել է լրագրողը, ինչին Հայաստանի նախագահը պատասխանել է. - «Միջազգային հանրութիւնը այլ տարբերակ չունի: Լեռնային Ղարաբաղը չի եղել անկախ Ադրբեյջանի կազմում: Խորհրդային Միութեան կոմունիստական կուսակցութեան Կովկասեան բերրոն է Լեռնային Ղարաբաղը մտցրել Ադրբեյջանի կազմի մէջ: Ինչո՞ւ միջազգային հանրութիւնը ողջունեց ԽՍՀՄ-ի փլուզումը ու չյայտարարեց, թէ Հայաստանը, Ադրբեյջանը, Վրաստանը, Ղազախստանը, Ուզբեկստանը ԽՍՀՄ-ի մասն են, մինչդեռ Լեռնային Ղարաբաղի ղեկավարը [միջազգային հանրութիւնը] պնդում է, թէ այն Ադրբեյջանի մաս է կազմում: Դա անտրամաբանական է, այդպէս չէ՞»:

Պատասխանելով Միացեալ Նահանգների Կոնգրէսի յանձնաժողովում Հայոց ցեղասպանութիւնը ճանաչող բանաձեւի ընդունմանը վերաբերող հարցին, Հայաստանի նախագահը ասել է. - «Հայոց ցեղասպանութիւնը ճանաչելու վերաբերել քննարկումները նորութիւն չեն Ամերիկայի Միացեալ Նահանգների քաղաքական կեանքում»:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎԱՍՏԱԿԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ

ԲՈՂՈՔԱԿԱՆ ՅԱՅԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

ՏԱԹԵՒԻԿ ԽԱՉԻԿԵԱՆ (ԵՊՀ արեւելագիտութեան ֆակուլտետի թրքագիտութեան բաժնի մագիստրատուրայի ուսանող)

Վերջին շրջանում թրքական մամուլում աւելի ու աւելի յաճախ է խօսուում միսիոներների եւ նրանց ծաւալած գործունէութեան մասին: Բացի այդ, հիմնականում շեշտադրուած է այն տեսակէտը, թէ վերջին տարիներին քրիստոնէութիւն ընդունած մուսուլմանների մեծ մասը նախկին քրիստոնէաներ են: Այս տեսակէտը ժամանակ առ ժամանակ ապացուցուած է արձանագրուող պատմութիւնների եւ դէպքերի միջոցով:

Կարծում ենք՝ հայ իրականութեան մէջ այս թեման այսօր քիչ է ուսումնասիրուած, բայց միաժամանակ այն շատ կարեւոր է: Վերջին տարիներին լուրջ ուսումնասիրութիւններ են կատարուել թուրքիայում ապրող իսլամացած հայերի թեմայի շուրջ: Նախկինում մեզ համար անյայտ բազմաթիւ իրողութիւններ են հրապարակուել: Սա մեծ քայլ է ցեղասպանութիւնից յետոյ թուրքիայում մնացած հայերի, ինչպէս նաեւ նրանց սերունդների յետագայ պատմութեան ուսումնասիրութեան եւ բացայայտման համար: Կարծում ենք՝ ցեղասպանութիւնից յետոյ թուրքիայում ապրող ծագումով հայերի ինդրի համապարփակ ուսումնասիրութեան համար անհրաժեշտ է ուսումնասիրել այնտեղ ապրող ողջ հայութեանը, ինչպէս նաեւ անդրադառնալ միսիոներների գործունէութեան պատմութեանը:

19-րդ դարից սկսած՝ միսիոներների համար Մերձաւոր Արեւելքը աւետարանչութեան համար կարեւոր կենտրոն էր: 1800-ական թթ. սկսած՝ նրանք սկսում են գործել այս տարածքում, մասնաւորապէս մուսուլմանների եւ հրեաների մէջ, սակայն ցանկալի արդիւնքների չեն հասնում: Մուսուլմանական հասարակութիւնը բացասաբար էր ընդունում միսիոներների գործունէութիւնը: Բացի այդ, քրիստոնէութիւն ընդունած մուսուլմանների համար խստագոյն պատիժներ էին սահմանուած: Այդ իսկ պատճառով որոշում է կայացուում տեղի քրիստոնէաների միջոցով թափանցել ոչ քրիստոնէաների մէջ:

Եւ այսպէս, 19-րդ դարից միսիոներներն ակտիւ գործու-

նէութիւն են ծաւալում ինչպէս Մերձաւոր Արեւելքում, այնպէս էլ Օսմանեան կայսրութեան տարածքում: 1800-1813թթ. միսիոներները հիմնադրում են տարբեր կազմակերպութիւններ, որոնց նպատակը Սուրբ գրքի տպագրումն ու տարածումն էին Մերձաւոր Արեւելքի ժողովուրդների մէջ: Այնուհետեւ մի շարք այցելութիւնների եւ շփումների շնորհիւ միսիոներները եզրայանգում են, որ իրենց գործունէութիւնն առաւել նպաստաւոր կը լինի յատկապէս հայութեան շրջանում:

Տեսականօրէն արեւմտեան միսիոներների շփումը հայերի հետ կարելի է բաժանել չորս փուլի.

1800-1830-ական թթ., երբ սկսում են առաջին անհատական շփումները:

1830-1847թթ., այսինքն՝ մինչեւ Օսմանեան կայսրութեան կողմից բողոքական համայնքի ճանաչումը:

1850-1915թթ., երբ համայնքի ճանաչումից յետոյ ձեռնարկուած են քայլեր, որպէսզի աւետարանական առանձին եկեղեցիները միսիոներների հսկողութեան տակ առնուեն եւ դրանք արեւմտեան եկեղեցիների կառուցուածքին համապատասխանեցուեն:

1915թ. յետոյ այսպէս կոչուած Հայ աւետարանականութեան Սփիւռքի շրջանը, երբ միսիոներների գործունէութիւնը զգալիօրէն նուազում է հայութեան շրջանում:

Միսիոներների առաջին շփումը հայերի հետ, այսինքն՝ շփման առաջին շրջանը, տեղի է ունենում Արեւելեան Հայաստանում, երբ Ալեքսանդր թագաւորը Հնդկաստանից ուսանական տարածքներ թափանցած միսիոներներին միջոցով հնարաւոր է համարում իր երկրի տարածքում ապրող մուսուլմանների քրիստոնէացումը: 1811թ. Բրիտանական Սուրբ գրքի ընկերութիւնը գնում է Վենետիկի հրատարակած Նոր Կտակարանի 1500 օրինակ եւ դրանք տարածում հայութեան շրջանում: Այնուհետեւ 1813թ. Բրիտանական եւ ամերիկեան Սուրբ գրքի համատեղ ընկերութիւնը նախաձեռնում է Աստուածաշնչի գրաբար հրատարակումն ու տարածումը: 1815թ. 5000, 1817թ. 2000 օրինակ Աստուածաշունչ եւ 2000 օրինակ Նոր Կտակարան է տարածուում հայերի մէջ:

Փաստօրէն, միսիոներները սկսում են ակտիւօրէն գործել հայերի շրջանում: Ժամանակի ընթացքում այս գործունէութիւնը

պէտք է արմատներ գցեր արեւմտահայերի մէջ, որ կատարուեց 1820-ական թթ., երբ ամերիկեան եւ բրիտանական ընկերութիւններն սկսեցին Աստուածաշունչը հրատարակել հայատառ թրքերէնով:

Արեւմտահայերի շրջանում գործունէութիւն ծաւալած առաջին ամերիկացի միսիոներները Լեւի Փարսոնզն ու Փլինի Ֆիսքն էին, որոնք 1819թ. ժամանում են Մալթա, այնտեղից էլ մեկնում են Իզմիր: Հարկ է նշել, որ այս միսիոներները շատ տպաւորուած էին հայերի կրօնասիրութեամբ: Լեւի Փարսոնզը նոյնիսկ ղեկավարութեանը գրած նամակում յայտնում է, որ Օսմանեան կայսրութիւն աւելի հեշտ կը լինի թափանցել հայերի, քան մուսուլմանների եւ հրեաների միջոցով:

1828թ. Մալթայում տեղի է ունենում կարեւոր միսիոներական ժողով, որտեղ պէտք է որոշուեր ամերիկեան Բորդ ընկերութեան յետագայ քաղաքականութիւնը Մերձաւոր Արեւելքում: Այդ ժողովին մասնակցում է նաեւ Ուիլյամ Կուտելը, որը 1824թ սկսած՝ կապ էր հաստատել Երուսաղէմի մի շարք հայ միաբանների հետ: Կուտելի առաքելութիւնը յատկապէս հայերի շրջանում գործելու մէջ էր: Ժողովում մի շարք դրոյթներ են ընդունուում, որոնք վերաբերում էին հայերին: Նախ, հաշուի առնելով մուսուլմանների մէջ ծաւալած գործունէութեան ապարդիւնութիւնը, որոշում է կայացուում այդուհետ գործել հայերի շրջանում, ինչպէս նաեւ այսպէս կոչուած քննական պոտոյտներ կատարել հայկական գաւառներում՝ հասկանալու եւ իւրացնելու հայ ժողովրդի առանձնապատկութիւնները, քիչ թէ շատ սովորելու հայերէնը եւ ծանօթանալու հայերի ինդիրներին: Փաստօրէն, 1828թ. սկսած՝ միսիոներներն իրենց գործունէութիւնը պաշտօնապէս ծաւալեցին հայերի մէջ:

Այն, որ հայերի մէջ գործունէութիւնն առաւել նպաստաւոր կը լինէր, եւ որ դրա համար կային բոլոր նախադրեալները, յայտնում է նաեւ միսիոներական պատմիչ Ռուֆուս Անդերսոնը իր «History of the Missions» գրքում: 19-րդ դարի մէկ այլ ժամանակագիր՝ Յարոլդին Գ. Մըրեանը, իր 1908թ. Կ. Պոլսում հրատարակուած, Տասնիններորդ դար եւ Յովհաննէս Պրոնաւի Տերոյնցի գրքում գրում է, որ ազգային եկեղեցուց հոռմէական հայերի բաժանուելուց

յետոյ հայերի մէջ ծայր է առնում բողոքականութիւնը եւ ակտիւօրէն տարածուում ամերիկեան միսիոներների կողմից: Նա այդ ամէնը բնական է համարում՝ ասելով, որ ժողովրդի մի մասի կողմից կաթոլիկութեան ընդունումը պէտք է հանգեցնէր միւս հատուածի ձգտմանը դէպի բողոքականութիւն, նշելով, որ այդ երեւոյթը առաւել ընդգծուած էր միմեանց հետ թշնամանքի մէջ գտնուող ընտանիքներում:

Արդէն 1835թ. Ապրիլ եւ Նոյեմբեր ամիսներին Կուտելը տեղեկացնում է կենտրոնին, որ իրենք մեծ յաջողութիւններ են գրանցում հայերի շրջանում:

Այս ամէնի հետ մէկտեղ միսիոնարները շարունակում են իրենց ծաւալած կրթական գործունէութիւնը: 1834թ., ընդարձակելով իրենց հիմնած Բերայի վարժարանը, այն վերածում են երիտասարդների համար բարձրագոյն վարժարանի: Ի դէպ, վերոնշեալ վարժարանում է ուսանել նաեւ Կ.Պոլսի առաջին աւետարանական հովիւ Աբիսողոմ Ութուճեանը: Այնուհետեւ Չմիւռնիայում բացուում է աղջիկների վարժարան հայ եւ յոյն աշակերտների համար: Այստեղ է հաստատուում հայագէտ միսիոնար Իլիաս Ռիքար, որը յետագայում կարեւոր դեր է խաղում Սուրբ գրքի աշխարհաբար թարգմանութեան մէջ: Միսիոներները Չմիւռնիա եւ տեղափոխում նաեւ Մալթայի եւ Պէչրութի իրենց հրատարակչատների հայերէն բաժինները: 1833-1840թթ. այստեղ սկսում են հրատարակել «Շտեմարան պիթեր» գրիտողմ Ութուճեանի եղբայր, ժամանակագիր Ստեփան Ութուճեանը վկայում է, որ բողոքականութեան տարածմանը մեծապէս նպաստել են նրանց հրատարակութիւնները, գրականութիւնն ու կրթական գործունէութիւնը: Նա գրում է. «Պէտք է գիտնալ ու խոստովանիլ, որ միսիոնարաց դպրոցն ու հայատառ թրքերէն Սուրբ Գիրք եւ ուրիշ օգտակար գրեանց տարածուիլը շատ կարեւոր դեր ունեցած է այդ քաղաքին եւ անոր սահմանակից վայրերու մէջ»:

Միսիոներական այս գործունէութեան շրջադարձային պահը լինում է 1835թ., երբ միսիոներներն իրենց, միսիոներական տան մէջ սկսում են պաշտօնապէս կի-

Շարք էջ 17



Blue Cross of California
Authorized Agent



Blue Shield of California
Authorized Agent

SERVING SINCE 1975

BEDROS S. MARONIAN

(818) 500-9585
BMaronian@AOL.com

FAX 500-9308 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205

ԵՐԻՔԵ ՈՒՇ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ԶԵՐ ԱՊԱԹՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ





A.B.A. INSURANCE SERVICES

ՊԵՂՐՈ ԷՈՒՍՏԱՉԵՆ ԵՒ ԻՄ ԴՈՒԴՈՒԿԻ ԿՈՆՑԵՐՏԸ (ՎԵՆԵՉՈՒԷԼԱՅՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԹԻ)

ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

... Երկու շաբաթ առաջ մամուլից յայտնի դարձավ, որ Վենեզուելայի մայրաքաղաք Փարաքատում Մարտի 5ին պիտի կատարուի իմ յօրինած Դուդուկի համար գրուած կոնցերտը՝ սիմֆոնիկ նուագախմբի հետ:

Այս կոնցերտը միակն է մեր իրականութեան մէջ, եւ բարեբախտաբար կամ դժբախտաբար կատարուեց օտար երկրում, օտար երաժշտի կատարմամբ:

Մինչ բուն նիւթին անցնելը՝ փոքր-ինչ պատմական տուեալներ:

... Տասնմէկ տարի առաջ, այս օրերին մեր տանը «յայտնուեց» շնորհառատ երաժիշտ Արա Գէորգեանը՝ իր գործընկեր սարգիս Բէրբէրեանի հետ:

Հաւանաբար, ինձ լաւ ճանաչող անձանց խորհրդին հետեւելով, նրանք եկել էին Արա Գէորգեանի համերգը իմ կողմից ղեկավարելու խնդրանքով:

Ես անձնապէս ծանօթ էի Արա Գէորգեանի հետ, բայց գիտէի նրա երաժշտութիւնը, ձեռքիս տակ էր 1997-ին հրատարակ իջած նրա Nostalgia ձայնագրովը, որ յաճախ էի լսում եւ ինձ դուր էր գալիս իր մօտեցումը՝ ժողովրդական երաժշտութեան հանդէպ:

Ինձ համար հաճելի էր նրա ներկայութիւնը մեր շարկի ներքոյ: Խօսակցութեան ընթացքին տակաւ առ տակաւ միջոցառումը բաւական տաքացաւ, մանաւանդ որ ընդհանուր խօսակցութեանը միջամտեցին տղաներս՝ Արմէնն ու Արամը եւ պատրաստակամութիւն յայտնեցին ամէն կերպ օգտակար լինել միջոցառմանը:

Մինչեւ համերգի օրը շատ քիչ ժամանակ էր մնացել: Հարկաւոր էր սիմֆոնիկ նուագախումբը կազմել, ազգային նուագարաններ նուագող երաժիշտների հրաւիրել, եւ, ի հարկէ անրաժեշտ էր կարգի բերել նոթային գրականութիւնը:

Ժամանակի սղութեան պատճառով որոշուեց համերգի ղեկավարման փայտիկը յանձնել Արմէնին, իսկ ես յանձն առայ զբաղուել մնացեալ բոլոր հարցերով:

Համերգասրահը հանդիսականներով ապահովելու մտահոգութիւնը դրոշմեց մեզ ուղիներ փնտռել: Արմէնս առաջարկեց հրաւիրել Եանիի նուագախմբի Ֆլեյտասար Պէլրօ Էոլաւաչէին, որին քիչ թէ շատ ճանաչում էր հայ հանդիսատեսը Եանիի համերգներից:

Երկու ճանաչուած անուններ. Արմէն Անասեան եւ Պէլրօ Էոլաւաչէ:

Երկուսն էլ անշահախնդրօրէն կատարեցին իրենց պարտականութիւնը: Մինչ այդ Պէլրօն դուդուկի դասեր էր վերցրել դուդուկահար Ալբերտ Վարդանեանից եւ 20 օրուայ ընթացքում կարողացաւ պատրաստել Արայի յայտագիրը եւ լաւագոյն կարողացաւ դրսեւորել իր տաղանդը նրա համերգին:

Յետագայում, որոշ ժամանակ Պէլրօն դուդուկի դասեր վերցրեց վարպետ Զիւլան Գասպարեանից: Եանիի նուագախմբի դիրիժոր Արմէն Անասեանը կարողացաւ համոզել Եանի-ին՝ նուագախմբում ներգրուելու դուդուկով:

Եանիին չափազանց դուր եկաւ դուդուկի հնչողութիւնը եւ նա յատկապէս այդ գործիքի եւ Պէլրօյի



Ձախէն աջ՝ Ալֆրէդօ Ռուհելէս, Պէլրօ Էոլաւաչէ եւ Հեյրիկ Անասեան

համար յօրինեց Թաջմահալին նուիրուած մի մեղեդի, որ ամէն մի կատարումից առաջ նա բացատրութիւններ էր տալիս գործիքի ստեղծման եւ նրա հինգ հազարամեայ պատմութեան մասին:

Այսպէս կամ այնպէս, Պէլրօն մտաւ հայ երաժշտական-կատարողական արուեստից ներս եւ բազում անգամներ մասնակցեց Արա Գէորգեանի եւ Արմէնի կիւրծի համերգներին, ինչպէս այստեղ, արտասահմանում, այնպէս էլ Հայաստանում:

Հայկական աւանդական դուդուկ (ծիրանափող) երաժշտական գործիք էլ լաւելի համաշխարհայնացնելու մտահոգութեամբ, ես յանձն առայ մի՛ ըստ իս, խիզախ ձեռնարկման:

Իմանալով դուդուկի հնարաւորութիւնները (հնչերանգ, ձայնաձաւալ, ութմիկ պատկերներ, եւ այլն), որոշեցի յօրինել երեք մասերից բաղկացած կոնցերտ՝ դուդուկի համար, ըստ որում՝ սիմֆոնիկ նուագախմբի ընկերակցութեամբ:

Դուդուկ գործիքի առերեւոյթ սահմանափակ հնարաւորութիւնների պատճառով, դիւրին չեղաւ գործիքաւորումը: Հարկաւոր էր այնպէս անել, այնպիսի գոյներ ստեղծել նուագախմբում, որ չխանգարէր դուդուկի մեղմ հնչողութեանը:

Այս ամէնից ելնելով, ես կոնցերտը յօրինեցի դասական սկզբունքով, եռմասանի, իւրաքանչիւր մասին տալով որոշակի չափ ու արագութիւն:

Պէլրօ Էոլաւաչէի խելակորոյս սէրը դուդուկի նկատմամբ, ինձ դրոշմեց էլ աւելի համարձակ լինել եւ կոնցերտի երրորդ մասում գրել այնպիսի առերեւոյթ անմատչելի նոթային գուգորումներ, բազմաթիւ խառը չափերում միեւնոյն մեղեդու տարատեսակ ութմերով իրականացած փոխակերպումներ, որոնց կատարման համար դուդուկահարը պարտաւորուած պիտի լինէր երկար փորձեր անել:

Կոնցերտը պատրաստ լինելուց ետոյ, երեք տարի առաջ դուդուկի մենանուագի նոթաները յանձնեցի երկու հայ դուդուկահարների եւ Պէլրօ Էոլաւաչէին: Եւ միայն մէկ-մէկուկէս ամիս առաջ հեռախօսազանդ.

- Հայրի՛կ, Պէլրօն խնդրում է, որ թոյլ տաս իրեն կատարելու քո դուդուկի կոնցերտը Վենեզուելայում, Արմէնն էր:

Սա արդէն ճիշտ եւրոպական, կամ ամերիկեան մօտեցում էր. հեղինակից թոյլտուութիւն են խնդրում նրա գործը կատարելու

համար: Բնականաբար, իմ կողմից առարկութիւն չէր կարող լինել, չիօսելով այն մասին, որ անգուսպ բերկրանքի պահեր ապրեցի նման մի առաջարկութեան համար:

Մի քանի ստեղծագործական հանդիպում Պէլրօյի հետ, փորձեր, նուագախմբի նոթաների եւ պարտիտուրի ճշգրտում եւ անմիջապէս նոթաներն ուղարկուեցին Փարաքատ՝ դիրիժոր Ալֆրէդօ Ռուհելէսին:

Եւ այսպէս, Մարտի 2ին, ես եւ Մարիտան մեկնում ենք մի երկիր, որը երբեւէ մեր մտքով էլ չէր անցել:

Բարեբախտաբար, փոքրաթիւ հայերի կողմից նախապէս կարգադրութիւններ էին արուած մեզ դիմաւորելու եւ հիւրանոց առաջնորդելու համար:

Եկաւ համերգի օրը՝ Մարտի 5-ը: Մինչ այդ, երեք օր շարունակ ես ներկայ էի փորձերին:

Երկար տարիների ընթաց-

քում, շատ քիչ անգամներ է պատահել, որ ես նման բարձր կարգի նուագախմբի կատարմանը ներկայ լինեմ: Աներեւակայելի լըջութիւն, կարգապահութիւն, բարձր որակ, երաժշտութեան ոգուն համապատասխան ըմբռնում:

Եւ այս ամէնն իր բացատրութիւնն ունի:

Այդ երկրում աներեւակայելի սէր ու պաշտամունք կայ դասական երաժշտութեան հանդէպ: Եւ ո՞րտեղից է գալիս այդ պաշտամունքը:

Վենեզուելայում արդէն 35 տարի է գործում է մի համակարգ, ըստ որի իւրաքանչիւր երախայ երեք-չորս տարեկանից սկսեալ պարտաւոր է երաժշտական որեւէ գործիք նուագել սովորել կաւովարական, անվճար երաժշտական դպրոցում:


Այդ համակարգի շնորհիւ, այսօր միայն Փարաքատն էրկու հարիւր լիստն հազար երախայ երաժշտական որեւէ գործիք է նուագում, եւ, իւրաքանչիւրն իր տարիքին համապատասխան, ընդգրկուած է այս կամ այն սիմֆոնիկ նուագախմբում: Ինչպէս մեզ ասացին, իշխանութիւնների նպատակն է նուագել սովորող երեխաների թիւը մօտակայ տարիներին հասցնել կէս միլիոնի:

Միայն Փարաքատում երկու հարիւր սիմֆոնիկ նուագախումբ կայ: Դրանց մէջ առաջնային են Սիմոն Բոլիվար (Սիմոն Բոլիվարը ազգային հերոս է եւ 19րդ դարի կէսերին ազատագրել է Վենեզուելան եւ նրա յարակից բոլոր երկրները, Հեն. Ա.) անունը կրող երկու նուագախմբեր, որոնցից մէկն էլ նուագեց իմ դուդուկի կոնցերտը Պէլրօ Էոլաւաչէի հետ:

Փորձերի ընթացքին ես որոշ բացատրութիւններ էին տուել տաղանդաւոր դիրիժոր Ալֆրէդօ Ռու-

Շաք.ք էջ 19

ՀԱՆԳԻՍՈՒԹԻՒՆ
ԱՅՆԹԱՊԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 90-ՐԴ ԱՄԵԱԿԻՆ
Կազմակերպութեամբ՝
Հ Ա Յ Ա Յ Ն Թ Ա Պ Ց Ի Ն Ե Ր Ո Ւ
Մ Ծ Ա Կ Ո Ւ Թ Ա Յ Ի Ն Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն
 Օրում Բանախօս՝
ՓՐՈՖ. ՎԱՀԱԳՆ ՏԱՏՐԵԱՆ
 ԳԵՂԱՐՈՒԵՏԱԿԱՆ ՑԱՏՏԱԳԻՐ
Կիրակի, 11 Ապրիլ 2010
 Կէսօրէ ետք ժամը 2:00-ին
 Տաղիւեան Մշակութային Կեդրոնի սրահին մէջ
 1201 N. Vine St., Hollywood, CA 90038



ARMENIAN AINTABTZY CULTURAL ASSOCIATION
 Presents
THE 90TH ANNIVERSARY COMMEMORATION OF AINTAB HEROIC RESISTANCE
 Keynote Speaker
Prof. Vahagn Dadrian
 CULTURAL PROGRAM
Sunday, April 11, 2010, at 2:00 p.m.
 at Taglyan Cultural Center
 1201 N. Vine St., Hollywood, CA 90038

ՄՈՒՏՔԸ ԱՉԱՏ
 Հիւրասիրտութիւն

FREE ADMISSION
 Reception following Program

Massis Weekly

Volume 30, No. 10

Saturday, MARCH 27, 2010

Recep Tayyip Erdogan: Armenians 'Sought To Wipe Out Turks' Threatens To Deport Armenians From Turkey

LONDON/ANKARA -- Turkish Prime Minister Recep Tayyip Erdogan has threatened to deport Armenian nationals living and working in his country in retaliation for resolutions passed by U.S. and Swedish lawmakers acknowledging the Armenian Genocide.

Asked during an interview with the BBC Turkish service in London last Tuesday, cited by Western news agencies, what he thought about the resolutions, Erdogan said: "There are currently 170,000 Armenians living in our country. Only 70,000 of them are Turkish citizens, but we are tolerating the remaining 100,000. If necessary, I may have to tell these 100,000 to go back to their country because they are not my citizens. I don't have to keep them in my country."

According to Erdogan, Armenians in the Ottoman Empire never faced a genocidal government policy and, on the contrary, themselves plotted to exterminate Turks.

The Turkish Prime Minister was reported to angrily dispute many historians' view that 1915 massacres of Ottoman Armenians constitute genocide as he marked the 95th anniversary

of a rare Turkish military victory during World War One.

"In 1915 and before that, it was the Armenian side that pursued a policy aimed at exterminating our people which led to hunger, misery and death," he said in a speech delivered in the city of Canakkale. "Forgetting all that is unfair and heartless. Our warriors always respected ancestral laws and did not kill innocent people even on the battlefield."

"I should underline that this country's soldier is bigger than history and that this country's history is as clean and clear as the sun. No country's parliament can tarnish it," Erdogan said, in a clear reference to U.S. and Swedish lawmakers' latest resolutions recognizing the slaughter of more than one million Armenians as genocide.

Դամասկոսի «էլ Համրա» սրահին մէջ, Շաբաթ եւ Կիրակի, 13 եւ 14 Մարտ 2010-ի երեկոյեան ժամը 8:30-ին, տեղի ունեցաւ Ն.Ս.Մ.Մ.-ի «Մեղրի» պարախումբի աննախընթաց ելոյթը՝ Սուրիոյ մշակոյթի նախարար Ռիատ Նասսի Աղայի հովանաւորութեամբ եւ տիար Ալպերթ Համբարձումեանի եւ վարչութեան անխոնջ աշխատանքներուն շնորհիւ: Հանդիսութեան ներկայ էին Դամասկոսի թեմի բարեջան առաջնորդ՝ Տէր Արմաշ Եպս. Նալպանտեանը, Դամասկոսի Հայ Աւետ. եկեղեցւոյ հոգեւոր հովիւ պատուելի Տաթև Պատմաճեանը, Սուրիոյ մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպան տիար Արշակ Փօլատեանը, Հարաւային Շրջանի վարիչ Մարմինի ատենապետ՝ ընկ. Սողոմոն Ելենեան եւ իր ազնուփայլ տիկինը, մշակոյթի նախարար-

կալական խօսք յայտնեց տիկ. Ալիս Օհանեանին՝ «Մեղրի» պարախումբի ելոյթի տարազներուն ծախսերը հողալուն համար, հայրենի վաստակաւոր պարուսոյց տիար Ալպերթ Համբարձումեանին՝ իր ժրջան աշխատանքին համար, ապա յաջորդաբար ներկայացուց պարերու շարքը:

Պարախումբի երիտասարդները՝ գօրաւոր եւ հուժկու հերոսական պարերով՝ կազմեցին բերդը, բարձր տրամադրութիւն պարգեւելով ներկաներուն: Մեր յարգելի ընթերցողներուն յաջորդաբար կը ներկայացնենք ելոյթին յայտագիրը.

1. Բերդ Պար:

2. Վաղարշապատ՝ Երաժշտ. Կոմիտաս վարդապետ, մենապարներ՝ Թամար Նազարեան, Ալին Մարաշլեան, Ազատ Սէֆէրեան, Սարին Վարպետեան, որոնք գրաւիչ եւ հեզաճկուն ձեւերով հրապուրեցին ներկաները:



ութեան արտաքին յարաբերութիւններու տնօրէն տիար Նեգիհ էլ խուրի, Սուրիոյ թատրոններու ընդհանուր տնօրէն՝ տիար Իմատ Ժալլուլ, արժանապատիւ քահանայարեւ, Հալէպի Ն.Ս.Մ.Մ.-ի վարչութիւնը, պարուսոյցը եւ պարային յանձնախումբի անդամներ, քոյր միութիւններու ներկայացուցիչներ, պետական բարձրաստիճան հիւրեր, արուեստասէրներ, արուեստի օտար քննադատներ եւ Հ.Մ.Մ.-ի մեծ ընտանիքը:

- 3. «Զուռնի Սրինքի» հայկական ժողովրդական պար: Ներկայացուցին Նայիրի իպոյեան եւ Հրաչ Պէքեան իրենց արդի եւ գեղեցիկ կատարողութեամբ:
- 4. «Վարդավառ» սոնական պար՝ (միջիններ): Անոնք հայկական սոնական հրապոյրը ներկայացուցին ժողովուրդին:
- 5. «Սիրահարի Պար» Գուսան Շերամի երաժշտութեամբ՝ (մեծ աղջիկներ):
- 6. «Նովիւներու Պար»՝ Երաժշ. իշաչատուր Աւետիսեանի (մեծ տղաք):
- 7. «Հայկական ժողովրդական Պար» (պզտիկներ):
- 8. «Վարցական Պար» (միջին եւ մեծ աղջիկներ):
- 9. «Կատակ Պար» փոքրիկներու կատարողութեամբ՝ Ժան Ապրէեանի, Իգապէլ Տէր Վարդանեանի, Մէլրի Գալթազեանի եւ Սեւան Մարաշլեանի:
- 10. Յունական պար՝ մեծերը ներկայացուցին գեղեցիկ կատարումով (մեծ աղջիկներ եւ տղաք):
- 11. «Արմենիա»՝ Երաժշտ. Արա Գէորգեանի (մեծ աղջիկներ եւ տղաք):
- 12. «Հայոց Աշխարհ» Արա Գէորգեանի՝ կատարեցին միջինները, գեղեցիկ եւ դիւթիչ ապրումներով:
- 13. Արաբական Պար՝ մեծ աղջիկներու կատարումով. մենապար Հրաչ Պէքեան:
- 14. Ռուսական Պար (պզտիկներ):
- 15. Մոլտովական Պար (մեծ աղջիկներ եւ տղաք):
- 16. Եւրոպական Պար (միջիններ):

ԼՈՅՍ ՏԵՍԱԾ Է «ՔԱՉ ՆԱԶԱՐ» ԱՄՍԱԳՐԻ ԱՄԱՆՈՐԵԱՆ ԳՈՒՆ ԹԻԸ

Շնորհակալութեամբ ստացած ենք սիրուելի միակ երգիծաթերթ, «Քաջ Նազար»-ի Դեկտեմբեր 2009 եւ Յունուար-Փետրուար 2010 թ. ամիսներու միացեալ թիւը, ճոխ եւ հետաքրքրական բովանդակութեամբ: Թերթի խմբագրականէն կ'իմանանք որ այս տարի կը գուգարդիկ թերթի հրատարակման 40-ամեակին: Ստորեւ կու տանք վերջին թիւի խմբագրականէն մաս մը:

2010 թուին լրանում է «Քաջ Նազար» ամսագրի հրատարակման 40-ամեակը: Թէ ինչ դժուարութիւններ ունեցանք, ինչ բարդութիւններ հարթեցինք, դա միայն յայտնի է հայ մամուլով զբաղուողներին: Ինչ գոհողութիւններ զնով «Քաջ Նազար»ը դարձաւ 40 տարեկան, այդ միայն մենք եւ մեր շրջապատի մարդիկ իմացան: Բայց եւ այնպէս միշտ մնացինք նոյն ուղեգծի վրայ: Պաշտպանեցինք արդարութիւնը, սատարեցինք իրաւահայրենասէրներին, կողմնակից եղանք միասնականութեամբ: Միշտ եղանք հայրենիքի կողքին, անկախ այն բանից թէ ի՞նչ վարչակարգ է տիրում այնտեղ, կամ ովքե՞ր են իշխանաւորները:

Տասը տարի առաջ հիմնեցինք «Հայաստանի հաշմանդամ եւ ծնողազուրկ երեխաների օգնութեան ֆոնտը»: Մի խումբ բարեմիտ ազգայիններ միացան եւ սատարեցին մեզ: Տասը տարիներ ընթացքում Հայաստանում եւ Արցախում աւելի

քան 150,000 հայ երեխաների նուէրներ բաշխեցինք, տօնական հանդիսութիւններ կազմակերպեցինք: Նորոգեցինք խարբերդի մանկատունը՝ եւ Սպիտակի դպրոցներից մէկը: Ունենք աւելի մեծ ծրագրեր գալիք տարուայ համար:

«Քաջ Նազար»ի շաբաթական երկու եւ կէս ժամեայ հեռուստաժուրնալը եղաւ մեր ժողովրդի խօսնակը, լսեց բոլորին, խորհուրդներ տուեց մեր երիտասարդներին եւ մի խօսքով միշտ մնաց իր կոչման բարձրութեան վրայ, հաւատարիմ մնալով իր սրբազան կոչումին եւ առաքելութեանը:

«Քաջ Նազար» ամսագիրը եւ հեռուստաժուրնալը լրացնում են իրար: Այդ են վկայում եւ հաստատում մեր տամեակ հազարաւոր ընթերցողները եւ ունկնդիրները, իրենց բազում հեռախօսազանգերով:

Տօնելով «Քաջ Նազար»ի հրատարակութեան 40-ամեակը, խոստանում ենք շարունակել մեր համեստ ծառայութիւնը մեր ժողովրդին եւ հայրենիքին: Հակառակ այն իրողութեան, որ օրէօր աւելի են բազմանում մեր դժուարութիւնները, պակասում են նիւթական եւ բարոյական հնարաւորութիւնները, սիրում ենք յուսալ որ անսպառ հաւատով եւ կամքով կը մնանք պատնէշի վրայ ամուր եւ հաստատ մինչեւ...»:

Թերթի շապիկը կը պատկերացնէ հայ եւ թուրք «բարեկամութեան» ջատագովները, այլ խօսքով երկու երկիրներու «ընտրանին»: Էջի երկրորդ կէսը նուիրուած է Հայաստանի ընչազուրկ մանուկներու ամանորեան կադանչէքներուն: Իսկ ձմեռ պային նոյնինքն Յովհաննէս Պալայեանն է իր սիրասուն մանկիկներով:»

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԼՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՆՈՐԱԶԵԻՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԱՇԿԵՐՈՅԹ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու Տիկնանց Միութիւնը ուրախ է հաղորդելու թէ այս տարի եւս ձեռնարկած է իր տարեկան 45րդ նորաձեւութեան (Fashion show) ճաշկերոյթ եւ վաճառք (Boutique): Սոյն ձեռնարկը տեղի պիտի ունենայ Շաբաթ, Ապրիլ 17, 2010 The Hilton Los Angeles Universal շքեղ պանդոկին մէջ: Պիտի ունենանք շուրջ 550 ներկաներ: Վաճառք boutique-ը պիտի սկսի կէսօրէ առաջ ժամը 10ին հրամցնելով գեղեցիկ իրեղէններ, զարդերը, իսկ ճաշի սպասարկութիւնը ժամը 12ին, որուն պիտի յաջորդէ հազուատներու ցուցադրութիւն:

Քարէն Հոլմանոս պիտի ցուցադրէ իւրապատուկ եւ հետաքրքրական վերջին նորոյթ հազուատները:

Րու ամանորեան կադանչէքներուն: Իսկ ձմեռ պային նոյնինքն Յովհաննէս Պալայեանն է իր սիրասուն մանկիկներով:»

«Քաջ Նազար» այս համարին մէջ կան շահեկան պատմութեանքներ, թղթակցութիւններ, երգիծական գրութիւններ: Յօդուածներ ունին Եղուարդ Մարգարեանը, Գեղամ Բարսեղեանը, Հենրիկ Հայրապետեանը, Վլատիմիր Յարութիւնեանը, Արամ Մաթէոսեանը, Արամայիս Սահակեանն ու Մարտին Խաչատրեանը, Լուսինէ Գասպարեանը, Հրանդ Ղազարեանը եւ ուրիշներ:

Հետաքրքրական բաժին մըն է «Թեհրանեան Նամականի»ն եւ «Տարեկան Աստղագուշակ 2010»:

Fashion show-ի Տիկնանց վարչութեան ատենապետուհի՝ Սալբի Մակրեան եւ իր 25 հոգինոց անձնուէր տիկիներու խումբը այս ձեռնարկը անուանեցին «Նորաձեւութեան Գաղտնիքը» (Mystere de la Mode): Ծրագիրը կ'ընդգրկէ հետաքրքրական «Կրկէսային ներկայացումը» Selk sisters-ի կողմէ: Այս ձեռնարկին հասոյթը պիտի յատկացուի եկեղեցու պայծառութեան:

Վարչութիւնը կը խոստանայ հրամցնել ճաշակաւոր նորաձեւութիւն, համեղ ճաշեր եւ հաճելի անակնկալներ:

Մեծապէս շնորհակալութիւն ձեր աջակցութեան համար:

Տոմսերը ապահովելու համար հեռաձայնելը՝ Այտա Սեղեանին (626) 358-9710 թիւին:

«Քաջ Նազար»ի հրատարակութեան 40-ամեակին նուիրուած այս համարն ունի նաեւ երգիծական կարներու հետաքրքրական փունջ մը, մեծ մասամբ քաղաքական բնոյթով...:

Կ'արժէ կարդալ «Քաջ Նազար»-ը երգիծական քննադատական եւ հասարակական անկախ ամսաթերթը, որուն հրատարակիչն ու խմբագիրն է Յովհաննէս Պալայեան: Կ'իմանանք թէ ընթացիկ տարուան մէջ հրապարակային հանդիսութեամբ մը պիտի նշուի «Քաջ Նազար»ի 40-ամեակը:

Կը շնորհաւորենք մեր պաշտօնակիցը մաղթելով յարատեւութիւն ու դալար ճանապարհ:

ԶԱՐԵԱՑ ՓՈՔՐԱԳՈՅՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԾ ԷՋ 2-ԷՆ

Եւ քաղաքական ընկալման մէջ թիւրիմացաբար նոյնացուած են աշխարհաքաղաքականութեան գործօն եւ գործիք հասկացութիւնները, ինչ որ ժամանակին ենթարկուել է համակարգային հասարակական, տնտեսա-քաղաքական համակարգային բարեփոխումների, որոնք յանգեցրել են սոցիալ-հոգեբանական լուրջ վերափոխումների, ինչի հետեւանքով յետոյ դարձել է անդառնալի, իսկ զարգացումն՝ անխուսափելի:

«ՄԵՂՐԻ» ՊԱՐԱԽՈՒՄԲ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԾ ԷՋ 13-ԷՆ

- ներ):
- 17. Հայկական Ժողովրդական Պար (մեծեր):
- 18. Հայկական Քոչարի շուրջպար (մեծեր):
- 19. Արագած «Միասնութեան Շուրջպար» Լէյլա Սարիբէկեանի (ամբողջ խումբի մասնակցութեամբ):
- Ելուցի ընթացքին ներկաները հիացմունքով եւ ջերմ ծափողջոյններով հետեւեցան բոլոր պարերուն:
- Այս առիթով, շնորհակալութեան խօսք նաեւ բոլոր անոնց՝ որոնք նուիրատուութեամբ եւ ալլապէս նեցուկ կեցան վարչութեան, աստարելով «Մեղրի»ի յաջողութեան:
- Այս առիթով, ջերմապէս կը շնորհաւորենք Ն.Ս.Մ.Մ.ի Դամասկոսի վարչութիւնը, որուն կը մաղթենք նորանոր յաջողութիւններ՝ հայ արուեստը հրամցնելով դամասկահայ հանրութեան եւ մանուկները դաստիարակելով մեր հայկական տոհմիկ աւանդութիւններով:

St. Gregory Ladies Society
Proudly Presents
45th Annual Luncheon & Fashion Show featuring Silk Sisters Aerialists
Mystere De La Mode
Saturday, April 17th 2010
Boutique/Social Hour 10:00 AM
Luncheon 12:00 PM
Fashion Show 1:30 PM
Donation \$80
The Hilton Los Angeles/Universal City
555 Universal Hollywood Dr. Universal City, CA 91608
For Tickets Call: Aida 626-358-9710 Salpi 626-355-3789

ՃՇԴՈՒՄ ՄԸ ՊԱՏՄԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐԻ ՄԸ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻ

Ծանօթ Խմբ.

Թերթի 13 Մարտ, 2010 համարի (էջ 7,17) մէջ, «Յովհաննէս Թուսանեանի Գրքարան» ՏԻՔ. Եղիկ Ճէրէճեանի շահեկան յօդուածին մէջ լոյս բերուած պատմական լուսանկարը եւ անուանեալը առնուած են «Google» կայքէջէն: Այդ կապակցութեամբ կու տանք Տ. Արեւի Բեմի. Մանուկեանի յօդուածը, ուր կը նշուի լուսանկարին մէջ տեսնուող դէմքերու ինքնութիւնը, վայրն ու թուականը:

Այս առթիւ կ'ապաւինինք մեր ընթերցողներուն բարեացակամութեան:

ԱՐԷՆ ՔՆՅ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Յարգարժան Խմբագրութիւն,

Ձեր հրատարակած ազգօգուտ շաբաթաթերթի սիւնակներուն մէջ հաճոյքով կը կարդայի ՏԻՔ. Եղիկ Ճէրէճեանի շահեկան յօդուածը Ամենայն Հայոց Բանաստեղծ՝ Յովհաննէս Թուսանեանի նաեւ ազգային-կուսակցական գործիչ մը ըլլալու մասին:

Թերթին ամբողջ 17-րդ էջը, արդարեւ, զբաղեցուցած էր նոյն յօդուածին շարունակութիւնը, ուր լայն տեղ տրամադրուած էր պատմական լուսանկարի մը, որուն տակ գրուած էր հետեւեալ բացատրութիւնը. «Էջմիածին 1908: Ձախէն աջ՝ Գէորգ Պաշինեան (իմա՝ Բաշինեան), Կոմիտաս Վարդապետ, Ղազարոս Աղայեան, Վահրամ Փափազեան, Յովհաննէս Թուսանեան, Արշակ Չօպանեան եւ Աւետիք Իսահակեան»:

Վստահ չեմ, արդեօք վերոյիշեալ լուսանկարն ու համապատասխան անուններուն թուարկումը յօդուածագիրը ինք հեղինակած է, թէ այդ միջամտութիւնը անկախաբար կատարուած է պատուարժան խմբագրութեանց կողմէ: Բոլոր պարագաներուն, արտօնեցէք ըսելու, որ ծանր եւ կրկնակի սխալ թույլ տրուած է, ցաւալի շփոթութեան մը հետեւանքով:

Խնդրոյ առարկայ լուսանկարը նախ ընդհանրապէս կապ չունի յօդուածի բովանդակութեան հետ: Սխալ են վայրն ու թուականը, ինչպէս նաեւ թուարկուած անուններուն մեծամասնութիւնը:

Այս առնչութեամբ ունեցած կասկածս փարատելու համար, իսկոյն կապ հաստատեցի 1915 թուականի Հայոց Յեղասպանութեան նահատակ-բանաստեղծ Ռուբէն Սեւակի եղբորորդի եւ Նիս քաղաքէն ոչ հեռու՝ Cagnes-sur Mer-ի (Ֆրանսա) մէջ նոյնանուն բանաստեղծի Յիշատակի Տան հիմնադիր Տիար Յովհաննէս Զիլինկիրեանին հետ, որ ուշագրութեանց յաճնեց հետեւեալ վկայութիւնները:

Այդ հոյլ մը մտաւորականներուն մէջ ո՛չ Գէորգ Գաշինեան, ո՛չ Ղազարոս Աղայեան, ո՛չ Յովհ. Թուսանեան եւ ոչ ալ Աւետիք Իսահակեան գոյութիւն ունին: Լուսանկարը առնուած է ոչ թէ էջմիածնի, այլ Լոզանի մէջ՝ 1907 թուականին: Կարելի էր երեւակայել Կոմիտաս վարդապետը, որ լուսանկարին մէջ կեդրոնական դիրք զբաղած է, այդ ժամանակ «յանդգնութիւնը» ունենար էջմիածնի բակին մէջ ման գալու աշխարհական զգեստով, փողկապով եւ գլխարկով, կրօնական իր սեւ վերարկուն հագած եւ գլխուն վեղարը դրած ըլլալու փոխարէն: Լուսանկարը ստոյգ առնուած է ուրեմն Զուլիցերիա, Լոզանի մէջ, 1907 թուականին, հաւանաբար Monthbenon կոչուած շրջանին մէջ: Այնպէս կը թուի, թէ լուսանկարին խորը երեւցող կառուցը արդարադատութեան շէնքն է: Այսօր ալ այդ շրջանին մէջ պահպանուած են հանրային գեղեցիկ պարտէզները, ուր միասին գտնուած եւ յիշատակի լուսանկարով մը մեզի ներկայացած է մեր մտաւորականներուն այդ խումբը:



Բայց, ի վերջոյ, որո՞նք են լուսանկարին մէջ տիրական կեցուածք ընդունած այդ վեց հոգին. ահաւասիկ անոնց անունները.

Ձախէն աջ՝ Ազատեան (բժշկութեան ուսանող), Ռուբէն Սեւակ, Արշակ Չօպանեան, Կոմիտաս վարդապետ, Ղազարեան (բժիշկ) եւ Գասպար Իփէկեան (դերասան):

Հետաքրքրական է, որ սոյն լուսանկարին երկրորդ տարբերակ մըն ալ պահպանուած եւ վերարտադրուած է Կարօ Գէորգեանի հրատարակած

1960 թուականի «Ամէնուն Տարեգիրքը», է. տարի, 135-րդ էջին մէջ: Դժբախտաբար հոս ալ սխալներ սպրդած են լուսանկարի վայրի եւ կարգ մը անուններու վերաբերեալ: Կարօ Գէորգեան լուսանկարին տուած է «Խմբանկար մը ժընեւեան օրերէն» խորագիրը. ինչպէս վերը դիտել տուի, թէպէտ երկիրը ճիշդ է, բայց քաղաքը ստոյգ Լոզանն է: Նոյն



հրատարակութեան առթիւ, յիշեալ լուսանկարին տակ թուարկուած են հետեւեալ անունները.

Ձախէն աջ՝ է. Ակնունի (պէտք է ըլլայ բժ. Ղազարեան), Արշակ Չօպանեան, անծանօթ մը, Կոմիտաս Վարդապետ, Ռուբէն Սեւակ եւ Գասպար Իփէկեան:

Այլեւս աւելորդ է ըսել, որ այս խմբանկարին մէջ է. Ակնունի չկայ: Տեղը, խմբանկարը կազմող իսկական անձերը, անգամ մը եւս՝ Ազատեան (բժշկութեան ուսանող), Ռուբէն Սեւակ, Արշակ Չօպանեան, Կոմիտաս վարդապետ, Ղազարեան (բժիշկ) եւ Գասպար Իփէկեան (դերասան), նոյնն են, բայց այստեղ անոնք փոխած են իրենց տեղերը եւ գլխարկները՝ հանած:

Խմբանկարներու առթիւ յաճախ կը պատահի, որ ապահով ըլլալու համար կը փափաքինք երկրորդ կամ նոյնիսկ երրորդ անգամ լուսանկարուիլ՝ փոխելով մինչ այդ մեր դիրքերն ու տեղերը:

Ահաւասիկ, այս պարագային ալ, Կարօ Գէորգեանի աւանդած վերոյիշեալ լուսանկարին մէջ նոյնը պատահած է, մինչ մեր մտաւորականները ընդամէնը փոխած են իրենց երբեմնի տեղերն ու ներկայանալու ձեւերը: Ձախէն աջ՝ Ղազարեան (բժիշկ), Արշակ Չօպանեան, Ազատեան (բժշկութեան ուսանող), Կոմիտաս Վարդապետ, Ռուբէն Սեւակ եւ Գասպար Իփէկեան (դերասան):

Շարունակելով մեր խմբանկարի ողիսական պատմութիւնը, հետաքրքրական է, որ լուսանկարի հրատարակութենէն հինգ տարի վերջ, Կարօ Գէորգեան, իր 1965 թուականի «Ամէնուն Տարեգիրքը» հատորի 142-րդ էջին մէջ, վերստին անդրադառնալով այս անգամ խմբանկարի առաջին տարբերակին, այսինքն՝ մտաւորականները գլխարկներն իրենց գլխուն, «ձշղում Մը Հրատարակուած Խմբանկարի Մը Առթիւ» խորագրին տակ կ'աւելցնէ հետեւեալ ուղղումը.


«Տարեգրքիս 1960-ի թիւով (էջ 135) հտարակած էինք այս խմբանկարին մէջ տարբերակը եւ ցաւալի շփոթութեամբ կամ աւելի ճիշդ նմանողութեամբ մը, այդ խմբանկարի աջ առաջին անձը ներկայացուցած էին իբրեւ է. Ակնունի:

Ներկայ խմբանկարը, զոր տրամադրեց մեզի Լեւոն Ազնաւուրեան (Իտալիա), կը ներկայացնէ միեւնոյն անձերը, տարբեր շարքով եւ միաժամանակ քաշուած: է. Ակնունի նմանցուած անձը, որ այս նկարին մէջ շարքի 5-րդն է (ձախէն աջ), այս շրջանի Լոզանի համալսարանի բժշկական ճիւղը յաճախող թիֆլիսցի Ղազարեանն է (փոք անունը մոռցուած է), իսկ ձախէն առաջինն ալ, զոր չէինք ճանչցած 1960-ի նկարի հրատարակութեան ժամանակ, եզրապատահաբար դերագործական ուսանող Ազատեանն է, (փոքր անունը նոյնպէս մոռցուած): Ուրեմն, այս խմբանկարի շարքով, անձերն են, ձախէն աջ՝ Ազատեան, Ռուբէն Զիլինկիրեան, Արշակ Չօպանեան, Կոմիտաս Վարդապետ, Ղազարեան եւ Գասպար Իփէկեան: Նկարուած է Լոզան, Մոնպլանոնի պարտէզը, 1910-ին»:

Յայտնի է շատերուն, որ մեր մատենագրութեան մէջ գրական շատ մը ստեղծագործութիւններ թիւրիմացաբար վերագրուած են տարբեր հեղինակներու: Մեր բանասէրներու սեպուհ պարտականութիւններէն մին եղած է հնարաւորին չափով ճշդել մեր ձեռագիր մատենաներուն մէջ այդպէս աւանդուած ստեղծագործութիւնների հեղինակային պատկանելիութիւնը: Ինչքան ցանկալի պիտի ըլլար, որ, մեր շատ մը պակասներուն իբրեւ լրացում, մեր իրականութեան մէջ նոյնպէս ստեղծուէր հաստատութիւն մը, ուր մասնագէտ անձինք ուսումնասիրութեան նիւթ դարձնէին կորուստէ փրկուած, հոս ու հոն հրատարակուած կամ դեռ արխիւներու փոշիներուն տակ ծածկուած յատկապէս Հայոց Յեղասպանութեան նահատակ մտաւորականներու փաղանգին պատկանող անձերու լուսանկարները, ճշգրտելով անոնց տեղը, ժամանակը եւ ինքնութիւնը:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՀ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ՀԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

ԲԱՐԵԼԱՎԵՆՔ ՄԵՐ ԿՅԱՆՔԸ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ 10 ՀԱՍԱՐԱԿ ՀԱՐՑԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԵԼՈՎ



ԸՆԴԱՄԵՆԸ 10 ՊԱՐՁ ՀԱՐՑԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԵԼՈՎ՝
ՄԵՆՔ և ՄԵՐ ՀԱՄԱՅՆՔԸ ՁԵՈՔ ԿԲԵՐԵՆՔ.

- ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿ
- ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ
- ԱՎԵԼԻ ԼԱՎ ՓՈՆԱԴՐԱՄԻՋՈՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ



Մարտ ամսին մեզանից յուրաքանչյուրը թերթիկ կստանա: Այդ թերթիկը առնչվում է Միացյալ Նահանգների առաջիկա մարդահամարին: Մարդահամարին մասնակցելը չափազանց կարևոր է, քանի որ դրանից կախված կլինի մեր ապագան: Մարդահամարի թերթիկը Ձեր իրավական կարգավիճակի, կրոնի, ինչպես նաև անձնական կյանքին վերաբերող հարցեր չի պարունակում: 2010 թվականի մարդահամարին ավելի մանրամասն ծանոթանալու համար այցելե՛ք 2010census.gov

ՈՒՐԵՄՆ ՊԱՏԱՍԽԱՆԵՔ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԹԵՐԹԻԿԻ 10 ՀԱՍԱՐԱԿ
ՀԱՐՑԵՐԻՆ, ՓՈՍՏՈՎ ՉԵՏ ՈՒՂԱՐԿԵՆՔ և ԲԱՐԵԼԱՎԵՆՔ ՄԵՐ ԱՊԱԳԱՆ:

**United States
Census
2010**
ԱՌՐ. ՄԱՐԿՈՂԱՎՈՐՄԱՆ 2010
ԱՅՆ ՄԵՐ ՁԵՈՔՈՒՄ Է

ԲՈՂՈՔԱԿԱՆ ՀԱՅԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Շարունակում է 17-էն

նէութիւն է ծաւալում անգլիական եկեղեցին, մասնաւորապէս այնպիսի կազմակերպութիւններ, ինչպիսիք են Լոնտոնի միսիոններական եւ Բրիտանական Աստուածաշնչի ընկերութիւնները: 1863թ. Այնթապում նրանք հիմնում են առաջին եկեղեցին, աւելի ուշ եւս մէկը՝ Տիրապեքիում:

Նախ 19-րդ դարի հայկական ջարդերը, հայոց ցեղասպանութիւնը, այնուհետեւ 1915-1922թթ. ամենաողբերգականն էին հայ ժողովրդի, ինչպէս նաեւ Հայ աւետարանական եկեղեցու համար:

Մինչեւ 1915թ. Թուրքիայում կային 4 աւետարանական միութիւն, 137 եկեղեցի, 82 ձեռնադրեալ հովիւ, 97 քարոզիչ, 14000 հաղորդական անդամ, 270 կիրակնօրեայ դպրոց՝ 22 700 ուսանողով, 7 քոլէճ՝ 1,700 ուսանողով, 46 բարձրագոյն վարժարան՝ 1,750 ուսուցիչով եւ 4,700 ուսանողով, 3 աստուածաբանական ձեռնարան՝ նախակրթարանների 19,400 սովորողով եւ 850 ուսուցիչով: Հայ աւետարանականների ընդհանուր թիւը հասնում էր 51,000-ի: Հայոց ցեղասպանութիւնից յետոյ Հայ աւետարանականների թիւը հասնում էր մօտ 14,000-ի: Նրանք ունէին 31 եկեղեցի, 25 ձեռնադրեալ հովիւ եւ 13 քարոզիչ:

Այսպիսով՝ Առաջին համաշխարհային պատերազմից եւ հայոց ցեղասպանութիւնից յետոյ Հայ աւետարանական համայնքը մեծ կորուստներ ունեցաւ: Մեծ թուով անդամներ գաղթեցին այլ երկրներ, եւ սկսուեց հայ աւետարանականութեան սփիւռքի շրջանը: Աշխարհի տարբեր երկրներում ստեղծուեցին Հայ աւետարանական եկեղեցու միութիւններ, որոնք ղեկավարում էին ԱՄՆ-ի Հայ աւետարանական եկեղեցու կողմից: Այսօր այդ միութիւնների թիւը հասնում է հինգի: Դրանք են՝ Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիների Միութիւն, Փրանսայի Հայ Աւետարանական Միութիւն, Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Միութիւն, Հայաստանի Հայ Աւետարանական Միութիւն, Հայաստանի, Վրաստանի, Արեւելեան Եւրոպայի եւ Միջին Ասիայի հայ աւետարանական միութիւն: Այսօր Թուրքիայի հայ աւետարանական եկեղեցիների կենտրոնը Լիբանանում գտնուող Մերձաւոր Արեւելքի հայ ավետարանական եկեղեցիների միութիւնն է:

Մինչեւ 1996թ. հայ աւետարանական եկեղեցիները Թուրքիայում հինգն էին, որոնք Ստամպուլում էին: Դրանք էին՝ Աւետարանական Ամենասուրբ Երրորդութեան եկեղեցին, Գեղիկիաշաչի հայ աւետարանական եկեղեցին, Էմանուէլ ժողովարանը, Հաքոյլի աւետարանական եկեղեցին եւ Ուսքուզարի հայ աւետարանական եկեղեցին: 2005թ. դրանք երկուսն էին: Դեռեւս 2000թ. անդամների թուի աճի եւ իրենց շարքերում ասորիների ընդգրկման հետեւանքով էմանուէլ եկեղեցին կորցնում է իր՝ Հայ աւետարանական եկեղեցու կարգավիճակը: Այս եկեղեցիները կազմուած են քաղաքացիական եւ հոգեւոր խորհուրդներից: Քաղաքացիական խորհուրդի ընտրութիւնները տեղի են ունենում 4 տարին մեկ: Օրինակ՝ Գեղիկիաշաչի եկեղեցու քաղաքացիական խորհուրդի

ղեկավարը միաժամանակ նաեւ հոգեւոր խորհուրդի նախագահն է: Վերջին շրջանում այս երկու պարտականութիւնները սովորաբար համատեղվում են: Վերապատուելիները ձեռնադրում են Մերձաւոր Արեւելքի հայ աւետարանական եկեղեցիների միութեան կողմից:

Վերջին տարիներին թրքական գանգուածային լրատուամիջոցների պնդմամբ միսիոններական գործունէութիւնը նոր ծաւալներ է ստացել: Շատերը նոյնիսկ մեղադրում են Թաջիփ էրդողանին միսիոններին տրուող իրաւունքների եւ հնարաւորութիւնների համար: Վերջին մի քանի տարիների ընթացքում բացուել են նոր եկեղեցիներ, հիմնադրուել են ֆոնդեր, հրատարակչատներ: Այսօր Թուրքիայի Հանրապետութիւնում ինչպէս առհասարակ աւետարանականների, այնպէս էլ կոնկրետ հայ աւետարանականների թուի վերաբերեալ տեսակէտները տարբեր են: ԱՄՆ կոնգրեսի փոքրամասնութիւնների գծով յանձնաժողովի տուեալների համաձայն՝ Թուրքիայում կան շուրջ 3000 աւետարանական, որոնց մէջ մեծ թիւ են կազմում հայերը: 2006թ. կառավարութեանը ներկայացրած գեկոյցում Թուրքիայի անվտանգութեան խորհուրդը մտավախութիւն էր յայտնում, որ 2020թ. Թուրքիայի բնակչութեան 10%-ը քրիստոնէութիւն ընդունած կը լինի, եւ որ 2001թ. տուեալներով արդէն 50,000 մարդ ընդունել է քրիստոնէութիւն, որոնց մէջ կան մեծ թուով մուսուլմաններ: Սակայն Թուրքիայի բողոքական եկեղեցիների միութեան իրաւաբանական խորհուրդը իր գեկոյցում առանձին անդրադարձել է այս թեմային՝ նշելով, որ քրիստոնէութիւն ընդունած մուսուլմանների մեծ մասը նախկինում իսլամացուածների սերունդներ են: Վերջին շրջանում քրիստոնէական արմատներով մուսուլմանների թեման դարձել է բաւական արդիական: Քրիստոնէութիւն ընդունող այս մուսուլմանների նախկինում քրիստոնէական արմատներ ունենալու տեսակէտը ապացուցում է ուսումնասիրութիւնների, արձա-

նագրուող ղէպերի, վերջիններիս կողմից իրենց նախնիների եւ արմատները գտնելու պատմութիւններով: Այս ամէնի համար հիմք են ծառայում նաեւ, ինչպէս թրքական մամուլն է նշում, վերջին տարիներին միսիոններին ակտիւ գործունէութիւնը յատկապէս քրտերի եւ ալեւիների շրջանում, ինչու էլ, նաեւ այստեղ արձանագրուող յաջողութիւնները: Բազմիցս առաջ է քաշուած ցեղասպանութեան տարիներին քրտերի եւ ալեւիների մօտ ապաստան գտած հայերի գոյութեան հարցը: Միսիոններին արձանագրած բազմաթիւ պատմութիւններ սրա ապացոյցն են: Մեծ թուով գիտնականներ պնդում են, որ Ազգային անվտանգութեան յիշատակած՝ քրիստոնէութիւն ընդունող մուսուլմանները հենց այդ նոյն նախկին քրիստոնէաների սերունդներն են, որոնք վերադառնում են իրենց արմատներին: Չնայած մեծ վտանգին՝ դրանով է բացատրուում նաեւ միսիոններական գործունէութեան ակտիւութիւնը յատկապէս Արեւմտեան Հայաստանի տարածքում: Այս հանգամանքը բացատրուում է նաեւ նրանով, որ այս տարածքում բնակչութիւնը բաւական ծանր սոցիալական, ինչպէս նաեւ կրթական պայմաններում է: Այն հարցը, թէ ինչու վերոյիշեալ նախկին քրիստոնէաների սերունդները չեն դիմում Հայ առաքելական եկեղեցուն՝ պատրիարքարանին, պայմանաւորուած է նրանով, որ շատ յաճախ այս գիւղական շրջաններում պարզապէս չեն լինում առաքելական եկեղեցու ծառայողներ, եւ գիւղացիները դիմում են տուեալ տարածքում գործունէութիւն ծաւալած միսիոններին: Եթէ նոյնիսկ բանը հասնում է պատրիարքարան գալուստ, ապա շատ յաճախ այս մարդիկ արժանանում են մեղմ սասժ ոչ գրկաբաց ընդունելութեան, որը կարող է ունենալ տարբեր պատճառներ, ինչպէս, օրինակ՝ զգուշաւորութիւնը, պետութեան կողմից իրականացուող սահմանափակումները, այդուհանդերձ, ցանկանալով վերադառնալ սեփական արմատներին եւ ինքնութեանը, նրանք դիմում են աւետարանական կամ կաթոլիկ եկեղեցիներին: Այսպիսով՝ կարելի է ասել, որ

հայ աւետարանականութեան պատմութիւնը հետաքրքիր գարգացումներ է ունեցել: Յատկապէս Թուրքիայում բնակուող հայ աւետարանականների խնդիրներն ու կեանքի պայմանները, կարծում ենք, առանձնանում են աշխարհի այլ երկրներում բնակուող հայ աւետարանականների խնդիրներից: Դա հասկանալու համար նախ անհրաժեշտ է ջմուռնալ, որ Թուրքական պետութիւնն իր կառուցուածքով տիպիկ իսլամական պետութիւն է, որտեղ քրիստոնէայ լինելն արդէն իսկ մեծ վտանգ է, առաւել եւս երբ այդ քրիստոնէան հայ է: Այս ամէնից բացի, հարկ է նշել նաեւ, որ Օսմանեան կայսրութեան ժամանակաշրջանից մինչեւ այսօր միսիոններն ընկալում են որպէս ազգի թշնամիներ: Հետեւաբար, նրանց գործունէութիւնը եւս խիստ բացասական արձագանք է ստանում: Այսօր հնարաւոր է ստույգ տուեալներ հաղորդել Թուրքիայում բնակուող հայ աւետարանականների թուի մասին: Այս արեցում պէտք է հաշուի առնել այն հանգամանքը, որ հայեր են ընդգրկուած ոչ միայն Թուրքիայում գործող հայ աւետարանական եկեղեցիների կազմում, այլեւ երկրի տարբեր մասերում գործունէութիւն ծաւալած միսիոններների հիմնած եկեղեցիներում: Այդ մասին վկայում են հենց իրենց՝ միսիոնների արձանագրած ղէպերը: Միսիոնների գործունէութիւնը կրօնական հիմքի վրա է, եւ շատ յաճախ մարդիկ, պարզապէս հրաժարուելով մուսուլմանութիւնից, դառնում են քրիստոնէայ առանց իրենց իրական էթնիկ ծագման մասին որեւէ մեկնաբանութեան: Նրանք կարող են ներկայանալ որպէս քրտեր, ալեւիներ եւ թուրքեր, սակայն այս խմբում մեծ թիւ են կազմում իրական էթնիկ հայերը՝ նախկին իսլամացուած հայերի սերունդները: Պէտք է յաւելել նաեւ, որ նոյն խնդիրը գոյութիւն ունի նաեւ յոյների շրջանում: Իրականում, կարծում ենք՝ այս խնդիրը մեզանում դեռեւս մնում է չուսումնասիրուած եւ կարիք ունի գիտական, ինչպէս նաեւ պետական լուրջ մօտեցման: Այս բնագաւառում լուրջ ուսումնասիրութիւնների ղէպերում հնարաւոր է գտնել իրենց ինքնութիւնն այս կերպ գոնէ պահպանել ցանկացող մեծ թուով հայերի:

ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂԹԱՆԸ
«Մասիս»ի աշխատակիցներէն ԱԼՊԵՌՄԻՆԱՍԵԱՆ, վերջերս ենթարկուած է վիրաբուժական գործողութեան մը: Շուտափոյթ եւ կատարեալ առողջութիւն կը մաղթենք իրեն:

Մեր վեթերան ընկերներէն ԿԱՐԱՊԵՏ ԵԱՂՍՉԵԱՆ վիրաբուժական յաջող գործողութեան մը ենթարկուած ըլլալով այժմ տուն վերադարձած է եւ կը բոլորէ ապաքինման շրջան մը: Արագ եւ կատարեալ առողջութիւն կը մաղթենք մեր երէց ընկերոջ:

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Avenue
Pasadena, CA 91107
Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով:
Յետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

INVITATION FOR BIDS
IFB NO. 1692
THE BUILD BACK FOR THE
RENOVATION OF HACLA
HEADQUARTERS
(A FIVE-STORY
OFFICE BUILDING)

The Housing Authority of the City of Los Angeles (HACLA) invites vendors to submit bids for the build back for the renovation of HACLA headquarters (a five-story office building) located at 2600 Wilshire Boulevard, Los Angeles, CA 90057. Copies of the IFB may be downloaded from the internet at www.hacla.org/cgs. Bids will be accepted at 2600 Wilshire Boulevard, 3rd floor, Los Angeles, CA 90057 until 2:00 p.m. (local time), March 31, 2010.

3/18, 3/25/10
CNS-1813636#
MASSIS WEEKLY

ԷՂԻԿ ՆԱԶԱՐԵԱՆԻ ՑԱԻԱԼԻ ՄԱՅԻԱՆ ԲԱՌԱՍՈՐԵԱԿԻ ԱՌԻՅՈՎ

Ռ. ԿՈՐԻԻՆ

Մարդկային կեանքը անցաւոր է, որեւէ մի կասկածանք, սակայն մնայունը մարդկային կեանքի արարքն է, այն կեանքը որ արդիւնաւոր աշխատանքով է իմաստաւորուում, ինչպէս հոսող ջուրը որ բերք է անեցնում, կամ ժամանակի այն միջոցում երբ օգտակար աշխատանք է արւում: Այն ինչ կատարւում է կեանքի ընթացքում բարի նպատակներով, դա է մնում որպէս բարի յիշատակ եւ պայծառ անուն սերունդների սրտում: Այն ինչ տւիր ուրիշներին, որը հոգու ուրախութիւն եւ մտքի զարգացում բերեց, դա է մնում որպէս շնորհակալ աշխատանք: Եթէ մարդը ամբարիշտների ճամբով չգնաց, բարոյական արժէքներով կեանք ապրեց, արդէն իսկ այդ մարդը յիշատակման արժանի անուն է թողնում, ինչպէս վաղամեռիկ Էդիլիւ, որ ապրեց հայ քրիստոնիայի կեանքով եւ կարճ ժամանակաշրջանում ազգանէր գործերով իմաստաւորեց իր կեանքը արժանի դառնալով բարի յիշատակման: Նա մեր «Սասուն» թաղամասի գաղափարական նւիրեալ երիտասարդ ազգային-հասարակական գործիչներից էր որպէս երկար տարիների ծնողական խորհուրդների անդամ, «Սիփան» միութեան գործունեակ միութեանական եւ ազգային այլ պարտականութեանց գործերում դերակատար:



Բախտաւորուում է երկու զաւակներով՝ Նարբէ եւ Նարէ անուններով: Հայրը՝ պրն. Աւետիսը գրասէր մի անձնաւորութիւն հեղինակել է երկու հատոր գրքեր, որտեղ ամփոփւած են նրա հայրենասիրական եւ ազգասիրական ջիւղ ապրումները՝ բանաստեղծութիւններ, յուշեր, դէմքեր ու դէպքեր, նաեւ բազմաթիւ յօդուածներով մամուլում ներկայացրել է իրենց զաւառի անցեալի յուշերից, նա հաւաստի տեղեկութիւններով մի առանձին յօդուածով ներկայացրել է Խորհրէս վրդ.ի կեանքը եւ նրա ողբերկազան վախճանի մասին: Նա երկար տարիներ իրենց Քալաւայ գիւղի տանուտէրն էր օգտակար լինելով գիւղացիութեան: Նա իր պաշտօնի բերումով «Քաղիսուդա» (տանուտէր) էր յորջորջւել եւ մինչեւ օրս էլ այդ անունով է կոչուում: Պրն. Աւետիսը իրենց գիւղի եկեղեցու հոգ տանողն էր, ժողովրդի բարեկարգութեան համար էլ ինքն էր, որ կանգուն էր պահում եկեղեցին՝ տարին մի անգամ կազմակերպելով ուխտագնացութիւն, նա Ամբրիկա գալով այդ ուխտագնացութեան պարտականութիւնը շարունակում էր էդիլը: Հիմա ինչ պիտի լինի այդ եկեղեցուց ճակատագիրը: Ահա այսպիսի ընտանիքում էր էդիլը հասակ նետել եւ դաստիարակւել՝ սիրել մեր հայրենիքը, ազգը եւ ժողովուրդը ու կարողութեան եղածին չափ ծառայել նրանց: Նա ընկերական շարքերում սիրւած եւ յարգւած էր որպէս համեստ եւ ազնիւ հոգեբանութեամբ հայ ընկեր մարդ:

Էդիլի վաղահաս մահը ալեկոծեց պրն. Աւետիսի եւ տիկ. Սառայի ընտանեկան կեանքը, ծնողի համար մեծ ցաւ ու կսկիծ է զաւակի մահը, այն էլ այնպիսի զաւակի, որ ծնողին պատիւ եւ արժանիք էր բերում, շրջապատը ուրախանում էր նրա օգուտութեամբ իր օգտակար կեանքով: Առաւել վիշտ ու մորմոք է ծնողի համար զաւակի մահը աչքից ու ձեռնահասութիւնից հեռու:

Պրն. Աւետիսը իր դուստրերի եւ փեսաների անմիջական օգնութեամբ եկեղեցական հոգեհանգստեան արարողութիւն էր կազմակերպել Գլենդէյլի Ս. Աստուածածին եկեղեցու, մեծ թվով սգակիրներ էին ներկայացել թէ եկեղեցում թէ Ամրոթէ սրահում հոգեճաշի սեղանին: Յաւալի եւ յուզիչ միջոցաւ էր տիրապետում էդիլի անժամանակ մահաւան տիտղոս առիթով: Դեռ նա կեանքից սպասելիքներ եւ ակնկալիքներ ունէր, զաւակների կեանքը, նրանց ամուսնութիւնը տեսնելու եւ վայելելու իր վաստակած կեանքի բարիքները: Ներկաներից մի քանի հոգի վեր հանեցին նրա

ՊԵՂՐՈ ԷՌԻՍՏԱՉԵՆ ԵՒ ԻՄ ԴՈՒԴՈՒԿԻ ԿՈՆՑԵՐՏ

Շարունակուած էջ 8-էն

հելէսին իմ երաժշտութեան ազգային բնոյթի, առանձին ներբերանգների ու տեմպերի վերաբերեալ: Պիտի խոստովանեմ, նա արեց աւելին, քան ես կարող էի երեւակայել: Անշուշտ, քիչ դեր չխաղաց նաեւ Պէդրոյի հանգամանալից բացատրութիւնը, մաւանանդ կոնցերտի երկրորդ մասի վերաբերեալ, ուր ես նկարագրել եմ Հայոց Մեծ Եղեռնը:

Եւ, ամենակարեւորը, որոտընդոտ ծափահարութիւններից յետոյ, բեմահարթակից Պէդրոն խօսեց կոնցերտի մասին, Մեծ Եղեռնի մասին, որ նկարագրութիւնը իր դրսեւորումն է գտել կոնցերտի երկրորդ մասում:

Պէտրոն յատկապէս կանգ առաւ այն հանգամանքի վրայ, որ կոնցերտը, որպէս այդպիսին, իր տեսակի մէջ առաջինն է հայ իրակալութեան մէջ, եւ որ մեծ պատիւ է վեներուելայի համար ստեղծագործութեան համաշխարհային առաջին կատարման պատուին արժանանալը:

Սկսում է կոնցերտի կատարումը: Հասարակութեան համար մի նոր աշխարհ է բացուել, քաղցրալուր, բերկրալի երաժշտութեան մի նոր աշխարհ, որի մէջ թեւածող մեղեդիների մէջ նա փորձում ինչ-որ նմանութիւն գտնել իր ազգային երաժշտութեան հետ: Գուցէ եւ գտնում է, - Ի՞նչ իմանաս..., լարուած ուշադրութեամբ նա հետեւում է իր համար բոլորովին նոր երաժշտութեան բնականոն սահմաններին:

Վերջանում է կոնցերտի առաջին մասը. ոչ մի ծափ, ոչ մի շշուկ: Նոյնը՝ երկրորդ մասից յետոյ: Պէդրոն կախարդել է բոլորին, գամել՝ աթոռներին. «Վարդանի մօր ողբը» հնարուրեց մեղեդու նուազախմբային տարբերակը նրա մեկնաբանմամբ, հնչում է հայօրէն, հայալար, հայի գգացողութեամբ: Այս մասի կատարման ժամանակ շատերի աչքերը թրջուած են:

Երրորդ մասի առնական, ուրախ, պարային տարբեր ութմներով առլի երաժշտութիւնը բոլորովին մի նոր, լուսաւոր աշխարհ է բացում ունկնդրի առջեւ, կարծես թէ այն ծիածանի տարբեր գոյներով շողախուած մի ծաղկեփունջ լինի, որի ամէն մի ծաղիկ իր բուրմունքն ունի:

Աւարտում է կոնցերտի կատարումը. խելայել, երկար ժամանակ չլուր ծափող զիններ: Բազմիցս խոնարհուում է Պէդրոն հանդիսատեսի առջեւ, բեմ է հրաւիրում հեղինակին: Հանդիսատեսը հանդարտուում է այն ժամանակ, երբ Պէդրոն որոշում է յանպատրաստի մի գործ նուագել:

Ես երբեւէ, ոչ մի տեղ, ոչ մի դասական երաժշտութեան համեր-

դի այդքան մեծ քանակի երիտասարդութիւն չեմ տեսել, մանաւանդ՝ այդքան խանդավառ:

Ոչ մէկի համար էլ զաղտնիք չէ. աներեւակայելի, անբացատրելի հաճոյք է ամէն մի հեղինակի համար՝ իր նոր ստեղծագործութեան կատարմանը ներկայ լինելը: Այդ հաճոյքը կրկնապատկուած է, երբ հեղինակը իր առջեւ տեսնում է իր մտքերի, յոյզերի, իր ասելիքի ճշգրիտ մեկնաբանին:

Ընթերցողներին հաւանաբար կը հետաքրքրի վեներուելայի հայութեան վիճակը:

Ամբողջ երկրում գրեթէ հինգ հազար հայ է ապրում, որի մօտ երկու հազարը՝ մայրաքաղաք Քալաքում:

Հայերի միակ եկեղեցին Քալաքատում է: Հիւանալի մի կառույց, որին կից գործում է Հայ Կենտրոնը եւ շաբաթօրեալ դպրոցը:

Մեծ չէ մեծահարուստների թիւը: Նրանց մէջ ամենաճանաչուածը Մարկո Չարիկեանն է, որի բարեհաճ հոգածութեամբ են լուծուում փոքրաթիւ հայ համայնքի հոգաբերը: Բազմաթիւ հինգ աստղանի հիւրանոցների հետ մէկտեղ, Չարիկեանը Երեւանի Մարիտա-Արմենիա հիւրանոցի բաժնետէլերից մէկն է, որի հետ մէկ ժամ գրուցելու եւ հիւրասիրուելու հաճոյքն ունեցանք:

Մեր ներկայութիւնից օգուտուելով Հայ Համայնքը որոշեց լիարժէք Պատարագ մատուցել Մարտի 7ին, թէեւ այդ օրը Մեծ Պահքի կիրակի էր: Հաւաստացեալ ժողովուրդը հոգեպէս լիացած, մտերմիկ մթնոլորտում, թէյի եւ սուրճի սեղանների շուրջը բոլորուած, մտաբերում էին հին, երանելի օրերն իրենց երիտասարդութեան:

Հայկական ոչ մի պարբերական, ընդհու, հեռուստատեսութիւն գոյութիւն ունի վեներուելայում:

Այս ամէնի հետ մէկտեղ կան փոքրաթիւ «Իւնիթ» հայեր, որոնցից մի ընտանիքը՝ անձինս Գէորգ եւ Մարիա Բալաբանեան գոյգի եւ Ջեփիլուի: Ես եւ Մարիտան նրանց շնորհիւ ճանաչեցինք թէ Քալաքատ, թէ նրա գեղատեսիլ վայրերը եւ վայելեցինք նրանց շքեղ հիւրասիրութիւնը:

... Տաղանդաւոր դուռուկահար Պէդրօ Էրուստաչէն դուռուկի աշխարհում ստեղծեց մի բաւիթ, մի ճամբայ, որից ետդարձ չկայ, միայն առաջ կարող ես գնալ, իսկ առաջ գնալու պատիւը տրւում է այն ստղանդաւոր ու շնորհալի դուռուկահարներին, ովքեր յամառ աշխատանքով կը կամենան իւրացնել իմ դուռուկի կոնցերտի երաժշտութիւնը, որպէսզի կարողանան առաջ գնալ իմ եւ Պէդրօ Էրուստաչէի դժած բոլորովին նոր, մինչ այսօր չեղած ճանապարհով:

Թիւն, պարագաներին վշտակցութիւն եւ ապրողաց արեւշատութիւն:

Հանգիստ աճիւնիդ, խաղաղութիւն հոգուդ սիրելի էդիկ:

Չեր Ծանուցումները Վատահեցեք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680
F: (626) 797-6863 massis2@earthlink.net



«ԿԱՆՔ, ՊԻՏԻ ԼԻՆԵՆՔ ՈՒ ԴԵՌ ՇԱՏԱՆԱՆՔ»

ՀՈՎԱՆԱԻՐՈՒԹԵԱՄԲ

**ՀԲԸՄ ՀԱՐԱԻԱՅԻՆ ԳԱԼԻՅՈՐՆԻՈՅ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ**

Պատուոյ նախագահութեամբ

Տէր Եւ Տիկին Գառնիկ Եւ Անժել Գարայեաններու

Բանախօս՝ Տօթօ. Գէորգ Քէշիշեան

ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 10, 2010 ժամը 6:30-ին

**ՀԲԸ Միութեան Փասատինայի Համալիրին մէջ
2495 E. Mountain Street
Pasadena, CA 91104**

Մասնաւոր Արարողութիւն Խաչքար Յուշարձանի Առջեւ

Գեղարուեստական Պատշաճ Յայտագիր

ՀԲԸՄ վաչէ և թամար Մանուկեան Երկրորդական վարժարանի Աշակերտներու

Չեռարուեստի Ցուցահանդէս

«Նոր Սերունդ - Նոր Հորիզոն»

Հիրասիրութիւն հանդիսութեանէն ետք

Մուտքը Ազատ